IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Բովանդակություն

Ներածություն

- Այս գործիքակազմի մասին
- Նախապատմություն
- Ի՞նչ է շրջանաձև տնտեսությունը
- Ինչո՞ւ է շրջանաձև տնտեսությունը կարևոր Իմփաքթ հաբի համար
- Շրջանաձևության պատմություններ
- Աջակցության հասանելիություն

Միտումներ և շրջանակներ

- Հիմնական միտումները, հասկացությունները և դերակատարները
- Բավարարություն
- Զարգացումներ և հնարավորություններ առանցքային ոլորտներում
  - Ագրոֆուդ
  - Շինարարություն և կառուցապատման միջավայր
  - Նորաձևություն
  - Էլեկտրոնիկա
  - Թափոններ և պլաստիկ
- Շրջանաձև բիզնես մոդելներ
- Շրջանաձև արժեքային շղթայի մեկնարկ՝ գծայինից շրջանաձևի անցնելու փոխարեն
- Շրջանաձև բիզնես մոդելների ֆինանսավորում
- Աշխատատեղերի ստեղծման հնարավորություններ

Նախապատրաստում

- Ոգեշնչեք ձեր թիմին. ինչպե՞ս է շրջանաձև տնտեսությունը կապված նրանց աշխատանքի և հավակնությունների հետ:
- Հնարավորությունների վերլուծում
- Տաղանդների բացահայտում

Էկոհամակարգի կառուցում

- Սկսենք շրջանաձև տնտեսության զրույցը
- Էկոհամակարգի խթանում
- Էկոհամակարգերի քարտեզագրում

Ծրագրային ինտեգրումներ

- Ծրագրերի տեսակները
- Կենտրոնացում մեկնարկի և աճի փուլերի վրա
- Ծրագրի նախագծում
- Ազդեցության կառավարում
- Ծրագրի ֆինանսավորում
- Հրահանգիչների պատրաստում
- Հետազոտում և ճիշտ ձեռնարկատերերի ու վենչուրների ընտրություն
- Խթանում և կապեր
- Ախտորոշում
- Գործընկերներ
- Կապիտալի հասանելիության հեշտացում
- Աջակցության տրամադրում
- Շրջանաձև տնտեսությանն աջակցող կապեր

Հղումներ և երախտիքի խոսք

- Հղումներ
- Երախտիքի խոսքեր

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Ներածություն

Այս գործիքակազմի մասին

Մենք կարող ենք կիրառել շրջանաձև նախագծման սկզբունքները փոքր և աճող բիզնեսներում՝ անկախ դրանց սոցիալական, բնապահպանական կամ շահութաբեր լինելու հանգամանքից:

Այս գործիքակազմը ձեռնարկություններին աջակցող կազմակերպություններին (ESO), հատկապես ինկուբատորներին և աքսելերատորներին առաջարկում է գաղափարներ, գործիքներ և մեթոդոլոգիաներ, որպեսզի իրենք ձեռնարկատիրական աջակցության ծրագրերում օգտագործեն շրջանաձև տնտեսության պրիզմաներ:

Այստեղ հավաքված ռեսուրսները նպատակ ունեն հնարավորություն ընձեռել.

- զարգացնել գիտելիքներ շրջանաձև տնտեսության միտումների, շրջանակների, բիզնեսների և ոլորտների վերաբերյալ,
- թիմի, կազմակերպության և էկոհամակարգի կարողությունների բարձրացում՝ խթանելու գործողությունները,
- շրջանաձևությունը որպես զարգացման սկզբունք ներառել ձեռնարկատերերի ծրագրային աջակցության մեջ:

Այս գործիքակազմը նախատեսված է ձեռնարկատերերին աջակցող կազմակերպությունների, բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցողների և ցանկացած կազմակերպության համար, որոնք հետաքրքրված են շրջանաձև նախագծման սկզբունքների ինտեգրմամբ այն աջակցության ծրագրերում, որոնք նրանք ներկայումս առաջարկում են իրենց բիզնես համայնքներին կամ կցանկանային դրանք զարգացնել:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Դուք կարող եք օգտագործել այս գործիքակազմը այնպիսի ծրագրերի մշակման համար, որոնք ակնհայտորեն կենտրոնացած են շրջանաձև տնտեսության լուծումներով ձեռնարկություններին աջակցելուն, կամ ինտեգրելու շրջանաձևության նախագծման սկզբունքներն այն ծրագրերում, որոնք բացահայտ չէ որ կենտրոնացած են շրջանաձև տնտեսության վրա: Վերջին մոտեցումը հատկապես առաջարկվում է շրջանաձևությունը լայնամասշտաբ դարձնելու համար:

Ենթադրվում է, որ դուք արդեն ունեք ծրագրերի նախագծման, իրականացման և կառավարման գիտելիքներ: Այս գործիքակազմը չի անդրադառնում, թե ինչն է ընդհանուր առմամբ հաջող դարձնում ձեռնարկատիրական ծրագիրը:

Ավելի շուտ, այս գործիքակազմն ընդգծում է շրջանաձև տնտեսության գիտելիքների, մոտեցումների և գործողությունների ինտեգրելու հնարավորությունները ձեռնարկատիրության աջակցության ծրագրերի նախագծման և իրականացման մեջ:

Անիվը նորից հայտնագործելու փոխարեն, շատ դեպքերում այս գործիքակազմը կապում և ընդգծում է այնպիսի հնարավորություններ ու կազմակերպություններ, որոնք արդեն իսկ ազատորեն հասանելի են՝ դրանք հատուկ ուղղելով ձեռնարկատերերին աջակցող անհատներին և խմբերին օգնելու համար:

Կիրառելով այս գործիքակազմի տարրերը՝ դուք կնպաստեք ձեռնարկատիրական էկոհամակարգում նոր ծնվող, բայց աճող երկխոսությանն այն մասին, թե ինչպես կարող են բիզնեսին աջակցող կազմակերպությունները, ներդրողները և մյուսները միասին աշխատել կլիմայի փոփոխության խնդրը լուծելու համար: Ձեր ծրագրերի միջոցով դուք նաև նորարարությունների հոսք կստեղծեք հիմնական ոլորտների և արժեշղթաների համար, որոնք պետք է դառնան ավելի շրջանաձև:

Նախապատմություն

Այս գործիքակազմի բոլոր առաջարկությունները հիմնված են փորձարկված մոտեցումների վրա: Դրանք փորձարկվել են Իմփաքթ հաբի ցանցի կողմից՝ որպես երկամյա Շրջանաձևության ծրագրի մի մաս, որն ուսումնասիրում է, թե ինչպես կարող է կայունությունը որպես նախագծման սկզբունք ներդրվել փոքր և աճող բիզնեսների հատվածում, և ֆինանսավորվում է Մավա և Դոեն հիմնադրամների կողմից:

2020-ից 2022 թվականների ընթացքում 12 Իմփաքթ հաբերն աջակցել են փորձնական ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերի, որոնք ինտեգրում են շրջանաձև նախագծման սկզբունքները տարբեր ձևերով՝ խթանելով շրջանաձև տնտեսության միջամտությունները, ձեռնարկությունների զարգացումը և էկոհամակարգի կառուցումը Ռուանդայում, Տանզանիայում, Սենեգալում, Զիմբաբվեում, Նիգերիայում, Հունաստանում, Իսպանիայում, Թուրքիայում, Խորվաթիայում, Չինաստանում և Կոլումբիաում:

Փորձնական ծրագրերի գտնվելու վայրը բերել է նրան, որ այս գործիքակազմի առանձին բաժիններ կենտրոնացած են առավելապես Եվրոպայի և Աֆրիկայի օրինակների վրա, սակայն հնարավորությունների մեծ մասն ակտուալ են անկախ ձեռնարկատիրությանն աջակցող կազմակերպությունների գտնվելու վայրից:

Յուրաքանչյուր փորձնական ծրագիր կենտրոնացած էր տարբեր ոլորտների վրա՝ կախված տեղական համատեքստից. առողջապահությունից մինչև թափոնների կառավարում, գյուղատնտեսությունից մինչև կրթություն կամ տեխնոլոգիայից մինչև տրանսպորտ և արտադրություն: Փորձնական ծրագրերն աջակցում են ձեռնարկություններին՝ ավելի կայուն դառնալու և իրենց արտադրանքն ու բիզնես մոդելներն ավելի շրջանաձև դարձնելու համար: Այս ծրագրով աջակցություն է ստացել 82 ձեռնարկություն:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Այս գործիքակազմը տրամադրվել է որպես կարողությունների զարգացման ծառայությունների ավելի լայն փաթեթի մաս՝ աջակցելու այս Իմփաքթ հաբերի և դրանց փորձնական ծրագրերի զարգացմանը: Այսպիսով, այս գործիքակազմի բովանդակությունը մշակվել է գործնական ուղիով և ճշգրտվել է փորձնական ծրագրերից ստացված տեղեկատվության հիման վրա:

> «Իմ նպատակն էր փոքր և միջին թռչնաբուծական ֆերմերներին տրամադրել էժան և մատչելի փետրահաններ: Ես մտածում էի ծախսերի կրճատման վրա աշխատելու մասին, և ինձ հաջողվեց դա՝ պարզապես այն դարձնելով 100% փակ շղթա: Արտադրության ծախսերը նախկինում կազմում էին միջինում 150 $, իսկ այժմ՝ 100 $: Պատրաստի արտադրանքն արժեր 300 $, իսկ ներկայում՝ 250 $»:
>
> Գործարար, որը ներգրավված է Իմփաքթ հաբ Հարարե փորձնական ծրագրում:

> «Հիմնական ձեռքբերումն այն է, որ ստացած գիտելիքի արդյունքում փոքր ֆերմերները 2021 թվականին բարձրացրել են մանիոկիի բերքատվությունը՝ 1 մետրիկ տոննա/ակրից (ավանդական աճեցման մեթոդներով) մինչև 7 մետրիկ տոննա/ակր:
>
> Գործարար, որը ներգրավված է Իմփաքթ հաբ Դար Էս Սալամ փորձնական ծրագրում:

Փորձարարական ծրագրի պրակտիկանտների և ձեռնարկությունների ուսուցումը, պատմություններն ու արձագանքները միաձուլված են այս գործիքակազմում: Հիմա եկեք էլ ավելի մեծ քայլ կատարենք դեպի շրջանաձևություն և վերականգնող տնտեսություն:

Ի՞նչ է շրջանաձև տնտեսությունը

Ներկայիս համակարգը կայուն չէ բիզնեսի, մարդկանց կամ մոլորակի համար: Լուծման մի մասը շրջանաձև տնտեսությունն է:

Մենք ընդերքից ռեսուրսներ ենք վերցնում արտադրանք ստանալու համար, որոնք օգտագործում ենք, և երբ այլևս չենք ուզում, դրանք դեն ենք նետում՝ վերցնել-արտադրել-թափել: Մենք սա անվանում ենք գծային տնտեսություն, և պետք է այս գծային մոդելից անցում կատարենք շրջանաձև տնտեսության: Շրջանաձև տնտեսությունը նախագծով վերականգնող և ռեգեներացնող տնտեսություն է:

> *«Մենք պետք է փոխակերպենք մեր «վերցնել-արտադրել-թափել» համակարգի յուրաքանչյուր տարր՝ ինչպես ենք մենք կառավարում ռեսուրսները, ինչպես ենք արտադրում և օգտագործում ապրանքները, և ինչպես ենք հետագայում վարվում այդ նյութերի հետ: Միայն դրանից հետո մենք կարող ենք ստեղծել ծաղկուն շրջանաձև տնտեսություն, որն օգուտ կբերի բոլորին մեր մոլորակի սահմաններում»:*
>
> Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամ

Շրջանաձև տնտեսությունը սկզբունքների և գործողությունների հզոր մոդել է՝ ռեսուրսների, նյութերի, բաղադրիչների և արտադրանքի արժեքը տնտեսությունում հնարավորինս երկար պահելու համար:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Այն համակարգված մոտեցում է ցուցաբերում բնական ռեսուրսների սպառումը նվազեցնելու և կայուն զարգացումը խթանելու համար:

> *«Նայելով արդյունահանման արդյունաբերական ներկայիս «վերցնել-արտադրել-թափել» մոդելից դուրս՝ շրջանաձև տնտեսությունը նպատակ ունի վերաիմաստավորել աճը՝ կենտրոնանալով ողջ հասարակության դրական շահերի վրա: Սա ենթադրում է տնտեսական գործունեության աստիճանական տարանջատում սպառվող ռեսուրսների օգտագործումից և թափոնների հեռացում համակարգից: Վերականգնվող էներգիայի աղբյուրների անցման վրա հիմնված շրջանաձև մոդելը ստեղծում է տնտեսական, բնական և սոցիալական կապիտալ»:*
>
> Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամ

Շրջանաձև տնտեսությունը հիմնված է երեք սկզբունքների վրա.

1. Ազատվել թափոններից և աղտոտվածությունից:
2. Պահպանել արտադրանքը և նյութերն օգտագործման մեջ:
3. Վերականգնել բնական համակարգերը:

Համակարգային այս փոփոխությունը հնարավորություններ է ընձեռում ոչ միայն շրջակա միջավայրի համար, օրինակ՝ նվազեցնելով CO2 –ի արտանետումները, այլ նաև ընկերությունների և տնային տնտեսությունների համար, օրինակ, նվազեցնելով առողջության հետ կապված ծախսերը և ստեղծելով աշխատատեղեր:

Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտը շատ պարզ ամփոփում է շրջանաձև տնտեսության հինգ հնարավորությունները հետևյալ կերպ.

1. ավելի ճիշտ օգտագործել սահմանափակ ռեսուրսները,
2. կրճատել արտանետումները,
3. պաշտպանել մարդու առողջությունը և կենսաբազմազանությունը,
4. խթանել տնտեսությունները,
5. ստեղծել ավելի ու ավելի լավ աշխատատեղեր:

Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամը հաշվարկում է շրջանաձև տնտեսության առավելությունները հետևյալ կերպ.

- 700 միլիոն $ տարեկան նյութական ծախսերի խնայողություն ամենօրյա կիրառություն ունեցող ապրանքների ոլորտում:
- CO2-ի արտանետումների կրճատում 48%-ով մինչև 2030թ:
- Սննդի ոլորտում առողջության հետ կապված 550 մլրդ. $ խնայողություն:
- ԵՄ տնային տնտեսությունների տնօրինվող եկամտի տարեկան աճ 3000 € -ով:
- Չինաստանի քաղաքներում ճանապարհների խցանումների կրճատում 47%-ով:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Ինչու՞ է շրջանաձև տնտեսությունը կարևոր Իմփաքթ հաբի համար:

Իմփաքթ հաբի առաքելությունն է օգնել ստեղծել արդար և կայուն աշխարհ, որտեղ բիզնեսն ու շահույթն օգտագործվում են մարդկանց և մոլորակի օգտին: Իմփաքթ հաբն գործում է ապագայի բիզնեսը ձևավորելու համար՝ ձեռներեցության, կայունության, նորարարության և բնապահպանական գործողությունների ներառման խաչմերուկում:
Շրջանաձև տնտեսությանն անցնելու գործընթացի խթանումը Երկիր մոլորակի ողջ տարածքներում, կօգնի իրականացնել այս առաքելությունը:
Ավելի մանրամասն այն մասին, թե ինչպես է Իմփաքթ հաբը միջոցներ ձեռնարկում շրջակա միջավայրը որպես գլոբալ ցանց պաշտպանելու համար կարդացեք այստեղ:
Ստարտափները կարևոր և պայթյունային դեր են խաղում կայունության անցումն արագացնելու գործում՝ շուկայում կայուն լուծումներ մշակելու, փորձարկելու և ընդլայնելու միջոցով: Մենք պետք է հնարավորություն տանք ձեռներեցներին ստեղծելու և զարգացնելու իրենց ձեռնարկությունները չեզոք կամ դրական բնապահպանական ազդեցությամբ:
Իմփաքթ հաբը ցանկանում է ավելի արագ ընդլայնել ձեռնարկատերերի ազդեցությունը՝ կենտրոնանալով սննդի և գյուղատնտեսության անթափոն և շրջանաձև կայուն մոդելների վրա:
Շրջանաձևությունը կարող է հիմնական գործոն լինել այս փոփոխությունների իրականացման համար:
Շրջանաձևությունը կարող է նաև նպաստել անթափոն արտադրությանն հասնելու նպատակին, քանի որ այս ջանքերի մի մասն է ձեռնարկատերերին հզորացնելը՝ հասկանալու և գործելու իրենց շրջակա միջավայրի վրա ազդեցությանը համապատասխան: Այս զեկույցը շրջանաձև տնտեսության միջոցով տրամադրում է այս դեպքը հաստատող բացահայտումներ:
Եթե մենք, որպես ձեռնարկություններին աջակցող կազմակերպություն, նրանց պատրաստում ենք արտադրանքի կամ ծառայության զարգացման սկզբնական շրջանում, մենք կարող ենք խրախուսել այս մոտեցման վաղ ներդրումը:
Մենք կարող ենք մեծ առաջընթաց գրանցել այստեղ՝ ինտեգրելով շրջանաձևությունը որպես նախագծման սկզբունք ուղղակիորեն մեր ձեռնարկատերերի աջակցության ծրագրերում:

> *«Շրջանաձևության և ներգրավվածության շուրջ արդեն մեծ ոգևորություն կա: Շատ դեպքերում գոյություն ունի շրջանաձևության քաղաքականություն, սակայն այն պատշաճ կերպով չի իրականացվում: Թվանացումը, իրազեկումը և շահերի պաշտպանությունը հիմնական խնդիրներն են, որոնց վրա պետք է կենտրոնանալ հատկապես Գլոբալ հարավում գտնվող ESO-ների դեպքում»:*
>
> Աուկսիցիլիա , Իմփաքթ հաբ Հարարե

Իմփաքթ հաբում մենք պարզեցինք, որ շրջանաձև տնտեսության կամ դրա ներառման վրա կենտրոնացած ծրագրերի առաջարկը, շահավետ է նաև ձեռներեցությանն աջակցող կազմակերպություններին: Այս մոտեցումների դիրքորոշմամբ տեղական Իմփաքթ հաբերը միավորում են տարբեր շահագրգիռ կողմերի դերակատարներին և ակտիվացնում են գործողությունները շրջանաձև տնտեսության համակարգի կառուցման համար:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Նման ծրագրերի նախագծումն ու իրականացումն օգնել է հարաբերություններ հաստատել կառավարության, քաղաքականություն մշակողների, համախոհ կազմակերպությունների, ռազմավարական կարողություն ունեցող ասոցիացիաների և ազդեցությանը կարևորություն տվող գործարարների գլոբալ համայնքի հետ, որոնք պատրաստ են կառուցել ավելի լավ բիզնես և վերաիմաստավորել ապագան:

Շրջանաձևության պատմություններ

Իմփաքթ հաբի շրջանաձևության պատմություններ բաժնում բերված են պատմություններ մեր ցանցի ձեռնարկատերերի գործողությունների մասին, ովքեր մասնակցել են մեր շրջանաձև տնտեսության փորձնական ծրագրերին և առաջնորդվում են այդ սկզբունքներն իրենց բիզնեսում ներդնելու ճանապարհով:
Այս դեպքերի մեծամասնությունը ձեռնարկություններ են, որոնք մասնակցել են այս գործիքակազմի մասին տեղեկացնող ծրագրին: Մեր շրջանաձևության պատմությունների օրինակները ներկայացված են ստորև:
Մենք հուսով ենք, որ այս պատմությունները ձեզ կոգեշնչեն և պատկերացումներ կտան այն ձեռնարկատերերի պրոֆիլների վերաբերյալ, որոնց կարող եք աջակցել ձեր շրջանաձևությամբ հագեցած/կենտրոնացած ծրագրերով:

- Օրգանական թափոններից մինչև այլընտրանքային սպիտակուցներ:
- Հունաստանում կայունության նկատմամբ ամբողջական մոտեցում:
- Պլաստիկ թափոններին նոր կյանք Տանզանիայում:

Այլ ոգեշնչող պատմություններին ծանոթանալու համար այցելեք մեր բլոգ:

Աջակցության հասանելիություն

Այս գործիքակազմը լայն հնարավորությունների ստեղծման ծրագրի մի մասն է արագորեն ընդլայնել գիտելիքների և մեթոդաբանությունների մատչելիությունը՝ շրջանաձև տնտեսության անցումը հնարավոր դարձնելու համար:
Եթե այս գործիքակազմը ձեզ ոգեշնչում է հարմարեցնել ձեռնարկատերերի աջակցության ծրագրերն ու ծառայությունները, բայց դուք զգում եք կազմակերպության ներսում լրացուցիչ կարողությունների զարգացման անհրաժեշտություն, դիմեք:
Իմփաքթ հաբն առաջարկում է կարողությունների զարգացման մի շարք ծառայություններ՝ օգնելու ձեռներեցներին աջակցող կազմակերպություններին և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցողներին՝ ինտեգրելու շրջանաձև նախագծման սկզբունքներն ու գործողություններն իրենց ձեռներեց համայնքներին առաջարկվող աջակցության ծրագրերում: Սա ներառում է առցանց ուսումնական ծրագիր ինքնուրույն ուսուցման համար, պարզեցված սեմինարներ կոհորտային ուսուցման և համագործակցության համար և ուսուցում անհատական աջակցության համար:
Իմփաքթ հաբի կարողությունների զարգացման ծառայությունները հեշտացնում են ձեր շրջանաձև տնտեսության ուսումնական ճամփորդությունը համախոհ և ոգեշնչող մասնագետների, աջակցող համայնքի հետ միասին:.
Ձեզ, ձեր թիմին և ձեր ձեռնարկատիրական համայնքին հասանելի աջակցության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք էլեկտրոնային նամակ ուղարկել Իմփաքթ հաբին հետևյալ հասցեով՝ capacitybuilding@impacthub.net:

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորիների համար

Միտումները և շրջանակները

Հիմնական միտումները, հասկացությունները և դերակատարները

Որպեսզի դուք, ձեր թիմը և գործընկերները սկսեք աշխատել, ընկղմվեք գաղափարների, երկխոսությունների և շրջանաձև տնտեսությունը ձևավորող մասնակիցների ուսումնասիրման մեջ:

Շահագրգիռ կողմերի հետ ճշգրիտ զրույցները հեշտացնելու համար կարևոր է հասկանալ կոնցեպտները և տերմինաբանությունը: Որպես շրջանաձև տնտեսության օժանդակողներ՝ ձեռնարկություններին աջակցող կազմակերպությունները պարտավոր են խուսափել կոնցեպտների աղավաղումից: Մենք աջակցում ենք նախաձեռնություններին, որոնք կարող են լինել վաղ փուլում և զարգացման փուլում, բայց նաև գիտակցում ենք նախաձեռնությունների իրական ազդեցությունը: Օրինակ՝ վերամշակված նյութերի հետ աշխատելը միշտ չէ, որ իդեալական լուծում է: Երբեմն, մեկ խնդիր լուծելիս ակամա նոր խնդիր ենք ստեղծում այլ տեղ, ինչպես ցույց է տալիս Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի այս բլոգային գրառումը: Նյութերի վերամշակումը կարող է ավելի էներգատար լինել, իսկ բնական նյութերը պլաստիկի հետ խառնելն ապագա թափոնների խնդիր է ստեղծում: Ահա, թե ինչու է կարևոր հասկանալ կոնցեպտները, սակայն բաց և քննադատական պահել միտքը ձեռնարկությունների կամ գործընկերների գնահատման ժամանակ: Շրջանաձև տնտեսության վերաբերյալ հիմնական հասկացությունների և հեռանկարների ակնարկը բերված է ստորև: Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամի (EMF) սահմանումները, մոտեցումները և ռեսուրսները բերված են այս գլխում, սակայն այլ համապատասխան շրջանակներ նույնպես ներկայացված են, քանի որ դրանք ևս կարևոր են: Նայեք և գտեք, թե որն է ամենաշատը համապատասխանում ձեր կոնտեքստին: Մի կորեք բարդության մեջ և թույլ տվեք ձեզ դանդաղ առաջ շարժվել. գործիքների այս փաթեթը կօգնի ձեզ լինել

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

պրագմատիկ՝ նրանում, թե ինչպես կկիրառեք այս ամենը ձեր աշխատանքում:

- EMF-ի butterfly model- շրջանաձև տնտեսության թիթեռնիկի մոդելը առանձնացնում է կենսաբանական և տեխնոլոգիական ոլորտները: Ահա նյութերի շրջանաձևության մասին արագ ամփոփում:

- The Value Hill -արժեքների սանդղակն առաջարկում է դասակարգում, որը հիմնված է արտադրանքի կյանքի ցիկլի վրա՝ նախքան օգտագործումը, օգտագործման ընթացքում և հետո: Սա թույլ է տալիս բիզնեսին դիրքավորվել արժեքների բլուրում և հասկանալ հնարավոր շրջանաձև ռազմավարությունները, որոնք նրանք կարող են իրականացնել, ինչպես նաև բացահայտել իրենց շրջանաձև ցանցում բացակայող գործընկերներին: Տես նաև ստորև բերված R- սանդուղքը:

- Քեյթ Ռաուորտի Doughnut Economics –ը մոլորակային սահմաններում մեր կարիքները ավարարելու մասին է:

- The Disrupt Framework -ը արտադրանքի շրջանաձև ռազմավարությունների համապարփակ ցանկ է: Այն ներառում է 80 գործնական ռազմավարություն՝ օգնելու և ոգեշնչելու ձեզ՝ արտադրանքը դարձնել շրջանաձև: Սա շրջանաձևությանն աջակցելու համար թեմաների լայն շրջանակ է՝ նախագծման ուղեցույց, մուտքերի վերաբերյալ որոշումներ, օգտագործում և կյանքի ավարտ, բիզնես մոդելներ և մատակարարման շղթայի համագործակցություն, թվային տեխնոլոգիաների օգտագործում:

- Circular strategies- Շրջանաձև ռազմավարությունները նախատեսված են այն ընկերությունների համար, որոնք ձգտում են բարելավել ռեսուրսների արդյունավետությունը՝ սահմանափակելով, դանդաղեցնելով, անջատելով և վերականգնելով նյութերի և էներգիայի ցիկլերը: Circularity Deck-ը պոտենցիալ շրջանաձև ռազմավարություններ ուսումնասիրելու և ամենահարմարն ընտրելու զվարճալի և մատչելի մեթոդ է: WWF whitepaper այս տեխնիկական փաստաթղթում կարող եք տեսնել, թե Շվեյցարիայի տարբեր տնտեսական ոլորտներում ինչպես կարող են կիրառվել այս շրջանաձև ռազմավարությունները:

- The Resolve Framework- շրջանաձև տնտեսության երեք սկզբունքներն իրականացված են վեց հատուկ բիզնես գործունեություններում՝ վերաստեղծում, համօգտագործում, օպտիմալացում, ցիկլ, վիրտուալացում և փոխանակում: Այն նաև առաջարկում է երեք սկզբունք՝ ուղղված գործողություններին. 1) բնական կապիտալի պահպանում և հզորացում՝ սահմանափակ պաշարների վերահսկման և վերականգնվող ռեսուրսների հոսքի հավասարակշռման միջոցով, 2) ռեսուրսներից արտադրանքի ելքի օպտիմալացում արտադրանքի, բաղադրիչների և նյութերի շրջանառության միջոցով, 3) համակարգի արդյունավետության խթանում՝ բացահայտելով և վերհանելով բացասական արտաքին գործոնները: R-Ladder-ն առաջարկում է շրջանաձև որոշումները դասակարգելու ևս մեկ միջոց՝ նայելով լավագույն ռազմավարություններին վերևից ներքև (տե՛ս հաջորդ էջի նկարը):

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

R-LADDER, Հոլանդիայի բնապահպանական գնահատման գործակալության նախագծային ուսուցում

Ապրանքի ավելի խելացի օգտագործում և արտադրություն

a. Մերժել (դադարել օգտագործել)

b. Վերանայել (օգտագործել ավելի ինտենսիվ)

c. Կրճատել (օգտագործել ավելի արդյունավետ, որպեսզի ավելի քիչ կարիք ունենաք)

Ընդլայնել կյանքի տևողությունը

a. Վերօգտագործել

b. Վերանորոգել

c. Վերականգնել

d. Վերարտադրել

e. Վերապրոֆիլավորել

Նյութերի օգտակար կիրառություն

a. Վերամշակել

b. Վերականգնել էներգիան (այրել)

Այժմ ավելի խորանալով պատմության մեջ՝ շրջանաձև տնտեսության մոդելը սինթեզում է մի քանի հիմնական մտածողության դպրոցներ, այդ թվում՝

- Վալտեր Ստահելի Արտադրողականության տնտեսագիտություն/ Performance economy:
- Ուիլյամ Մաքդոնայի և Մայքլ Բրաունգարտի Օրորոցից օրորոց դիզայնի/ Cradle to Cradle design փիլիսոփայությունը:
- Ջանին Բենյուսի կողմից ձևակերպված Բիոմիմիկրիա/ Biomimicry:
- Ռիդ Լիֆսեթ և Թոմաս Գրեդել Արդյունաբերական էկոլոգիա/ industrial ecology :
- Ամորիի, Հանթեր Լովինսի և Փոլ Հոքենի Բնական կապիտալիզմ/ Natural capitalism:
- Գյունտեր Պաուլիի կողմից նկարագրված Կապույտ տնտեսության համակարգերի/ Blue Economy systems մոտեցում:

Լրացուցիչ համապատասխան հասկացությունները ներառում են.

- Ստոկհոլմի Կայունության կենտրոնի/ Stockholm Resilience center մոլորակային սահմանները , ինչը ոգեշնչեց Քեյթ Ռաուորթին ստեղծել Doughnut Economy:
- Բավարարությանն անցնելը /Sufficiency transitions ենթադրում է էական փոփոխություններ բարձր սպառման դասերի սպառման մոդելներում, ներառյալ սպառման մակարդակի նվազեցում:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Բավարարություն

Բավարարությունը հաճախ նշվելով որպես մոլորակի դեգրադացիայի կասեցման մոտեցում, տարբերվում է, բայց կապված է շրջանաձևության հետ: Ստորև ներկայացված է WWF-ից՝ Շվեյցարիա, Լեա Վայսենբերգերի և Պատրիսիա Մացդորֆի ակնարկը, որը գրված է հատուկ այս գործիքակազմի համար:

Կայունության մեջ բավարարության հայեցակարգը

Ապրանքների մեծ մասի արտադրությունը, ինչպես նաև այս ապրանքների մատուցած ծառայությունները ժամանակի ընթացքում դարձել են ավելի արդյունավետ: Այսօր, օրինակ, սառնարանի արտադրությունն ու շահագործումը ավելի քիչ էներգիա է ծախսում, քան մի քանի տասնամյակ առաջ: Չնայած այս առաջընթացին, գլոբալ տեսանկյունից մեզ չի հաջողվել վերջին տասնամյակների ընթացքում նվազեցնել ռեսուրսների ընդհանուր սպառումը և դրանից բխող շրջակա միջավայրի աղտոտումը:

Ընդհակառակը, էներգիայի և ռեսուրսների սպառումը, ինչպես նաև այնպիսի կարևոր աղտոտիչների արտանետումները, ինչպիսին է CO2-ը, անշեղորեն աճել են տնտեսական աճի և բարգավաճման հետ մեկտեղ: Այս միտումին դիմակայելու տարբեր մոտեցումներ կան: Տարբերակվում են տեխնիկական միջոցները (արդյունավետության և հետևողականություն բարելավում, հաճախ կապված շրջանաձևության հետ) և վարքային միջոցառումների (բավարարություն) միջև: Առաջին հայացքից թվում է, որ բավարար լինելը զուտ անհատական ընտրություն է: Այնուամենայնիվ, այս մոտեցումը կարող է նաև խթանվել քաղաքական մակարդակում՝ օգտագործելով հատուկ քաղաքական գործիքներ՝ չափավոր սպառումը խրախուսելու համար (Schneidewind and Zahrnt, 2014; Fischer and Griesshammer, 2013):

Բավարարությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք փոխում են մարդկանց սպառողական վարքագիծը՝ կայունացնելու և նվազեցնելու նպատակով նոր ապրանքներ արտադրելու համար օգտագործվող ընդհանուր ռեսուրսները (Karagounis, 2021): Այս ռազմավարության հիմնական հարցը հետևյալն է. քանի՞ իր է մեզ անհրաժեշտ լավ կյանք վարելու համար: Ուստի մարդիկ չպետք է չափից ավելի սպառեն, այլ միայն այնքան, որքան կարող է ապահովել շրջակա միջավայրը (Alexander, 2012): Բավարարության մոտեցումները տեղին են և կիրառելի մեզանից յուրաքանչյուրի համար: Այս մոտեցումները հատկապես կարևոր են ավելի հարուստ երկրների համար, որտեղ ապրանքների և ծառայությունների գերսպառումը դարձել է գերիշխող միտում (EEB, 2019):

Առարկաներ ունենալու փոխարեն դրանք օգտագործելը բավարարության մի կողմն է՝ մեքենաներ, հագուստ կամ գործիքներ: Վարձակալության սխեմաները, փոխանակման միջոցառումները կամ վերանորոգման արհեստանոցներն ընդամենը մի քանի օրինակ են, որոնք հնարավորություն են տալիս կիրառել սպառման այս եղանակը: Բավարարության միջոցառումների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեծ է: Այնուամենայնիվ, իրականացումը դժվար է, քանի որ անհրաժեշտ է մարդկանց վարքագծի արմատական փոփոխություն:

Բավարարության հիմնարար գաղափարները լայն մասշտաբով գործնականում կիրառելու համար դեռևս անհրաժեշտ է հաղթահարել որոշ խոչընդոտներ: Օրինակ՝ այն պատկերացումները, որ մեր տնտեսությունները կարող են ընդմիշտ և բավարար չափով աճել, փոխադարձաբար բացառվում են, կամ պետք է հաշվի առնել վերականգնման էֆեկտը (օրինակ՝ ունենալ էներգախնայող լամպ, բայց այն չանջատել ամբողջ գիշեր) (Zink and Geyer, 2017; Sorrell, 2010; EEB, 2019): Այնուամենայնիվ, որոշ ոլորտներում կարող են նկատվել փոփոխություններ և կարող են խթանվել սպառման վերաբերյալ քննարկումները (Prince, 2005):

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Զարգացումներ և հնարավորություններ առանցքային ոլորտներում

Համաշխարհային տնտեսական ֆորումը հրապարակեց այս զեկույցը 2021թվականին Աֆրիկայի շրջանաձև տնտեսության դաշինքի համար Աֆրիկայում շրջանաձև տնտեսության հնարավորությունների մասին: Համաձայն այս զեկույցի, այստեղ ուշադրություն պետք է դարձվի սննդի համակարգերի, փաթեթավորման, կառուցված միջավայրի, էլեկտրոնիկայի, ինչպես նաև նորաձևության և տեքստիլի վրա:
Մի մոռացեք նաև ստուգել Footprints Africa-ի հիանալի ակնարկը շրջանաձև տնտեսության դեպքերի ուսումնասիրությունների վերաբերյալ: Ահա ևս մի քանի դեպքի ուսումնասիրություններ նվիրված մաշտաբավորման նորագույն տեխնոլոգիաներին:

Այս ոլորտների համար սույն գործիքակազմում հավաքված է որոշակի համատեքստային տեղեկատվություն, լավագույն փորձ, հաջողակ նորարարությունների օրինակներ և տարբեր հետաքրքիր լրացուցիչ ինֆորմացիայի աղբյուրների ցանկ: Դուք կգտնեք նաև ռազմավարությունների ցանկ, որոնք այս ոլորտների ձեռներեցները կարող են մշակել շրջանաձև տնտեսությանն աջակցելու համար:

Ագրոֆուդ

Ագրոպարենային ոլորտը կարող է մեծ օգուտ քաղել շրջանաձև տեսանկյունից, օրինակ.

- Առողջ հողեր՝ սննդանյութերի համալրման և կենսաբազմազանության բարձրացման միջոցով:
- Սննդի կորստից խուսափում սառը պահեստավորման միջոցով (օրինակ՝ Inspirafarms), սառը շղթայի լոգիստիկա և վերամշակում/պահպանում (օրինակ՝ Ketchup նախագիծը):
- Կոմպոստացման կամ կենսագազի ստացման համար օրգանական թափոնների հավաքում (օրինակ՝ Lono):
- Հետաքրքիր զարգացում է այն, որը կապում է գյուղատնտեսության ոլորտը շինարարության ոլորտի հետ, գյուղատնտեսական թափոնների, օրինակ՝ եգիպտացորենի ցողունների օգտագործումը շինանյութերում, (ինչպես անում է ECOR-ը):

Հեթ Գրոեն Բրեյնը ընդգծել է երեք ռազմավարություն որոնց վրա կենտրոնանում են շատ ձեռնարկատերեր.

1. Թափոնների և գնման ծախսերի կրճատման նպատակով ընկերություններում նյութերի ցիկլերի փակում:
2. Թափոնների հոսքերի հավաքում, որպեսզի տարբեր բաղադրիչները հնարավոր լինի օգտագործել առանձին, և ընդհանուր արժեքը մեծանա:
3. Արժեքի ավելացում թափոնների հոսքերին, օրինակ՝ նոր ապրանքներ ստեղծելով:

Սննդի և շրջանաձև տնտեսության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Շինարարություն և կառուցապատման միջավայր

«Շինարարության ոլորտը տարեկան սպառում է 42 մլրդ. տոննա ռեսուրս՝ այն դարձնելով ամենանյութատար ոլորտը: Շինարարության ոլորտն արտադրում է նաև ամբողջ գլոբալ թափոնների մոտ մեկ երրորդը, որոնց մեծ մասը չի վերամշակվում կամ վերաօգտագործվում, այլ հայտնվում է աղբավայրերում»:

Շրջանաձև տնտեսություն

Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամն ընդգծում է շրջանաձև շինարարության ոլորտի երկու հստակ առավելությունները.

1. Շրջանաձև սկզբունքներով շենքերի վերանորոգման և արդիականացման մեջ ներդրումները կարող են հարմարավետ, հարմարվող և դրական ազդեցություն ունենալ կառուցված միջավայրի ոլորտի համար:
2. Շինանյութերի վերաօգտագործման և վերամշակման ենթակառուցվածքի հետ միասին կարելի է հասնել արժեքի ավելի մեծ շրջանառության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչը կօգնի նվազեցնել արդյունաբերության բեռը ելային ռեսուրսների սպառման վրա:

Ստորև բերված են շրջանաձևության կարևոր թեմաները շինարարության համատեքստում:

- Էկոլոգիապես մաքուր տեղական արտադրության նյութեր (առանց պլաստիկի):
- Շինանյութերի վերաօգտագործման կամ օգտագործման փոփոխության, օրինակ՝ գրասենյակային տարածքից բազմաբնակարան շենք անցում կատարելու համար վերակառուցման նախագիծ:
- Շենքի և/կամ նյութերի սեփականության իրավունք:
- Աշխատակիցների հմտություններ շրջանաձև շինարարության և վերապատրաստումներ աշխատատեղեր ստեղծելու համար:

Շենքում օգտագործվող նյութերի հետքի ոգեշնչող օրինակներ են Madaster -ը (Նիդեռլանդներում գտնվող շենքի «նյութական անձնագիրը») և հարթակները, որոնք ապահովում են շինանյութերի մնացորդների հասանելիություն Բասկերի տարածաշրջանում՝ Իսպանիա, կամ Բեռլինում՝ Գերմանիա: Հարավային Աֆրիկայում DigiYard -ը կամուրջ է կառուցում մնացորդային, վերականգնված կամ թեթև վնասված շինանյութերից և սոցիալական (դպրոցների կամ աղքատ թաղամասեր) շինարարության ներձեռնարկատիրական գործունեություն է ծավալում՝ ARUP-ի ներբիզնես նախաձեռնությունը:

Նորաձևություն

Նորաձևությունը համաշխարհային խոշոր արդյունաբերություն է, որը կայունության զգալի մարտահրավերներ է ներկայացնում: Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամի 2017թ. Շրջանաձև տեքստիլ զեկույցի թվերն ապշեցուցիչ են:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

«Հագուստը կենցաղային անհրաժեշտություն է և շատերի համար անհատականության կարևոր արտահայտություն: Այնուամենայնիվ, արդյունաբերության «վերցնել-արտադրել-թափել» մոդելը շրջակա միջավայրի բազմաթիվ ազդեցությունների և տնտեսական արժեքի զգալի կորստի հիմնական պատճառն է: Ամեն վայրկյան թափվում կամ այրվում է մեկ աղբատար մեքենայի չափ տեքստիլի թափոն: Ենթադրվում է, որ ԱՄՆ ամեն տարի մոտ 500 մլրդ. դոլար է կորցնում հագուստի պատճառով, որը գրեթե չեն կրում և հազվադեպ է վերամշակվում: Եթե ոչինչ չփոխվի, ապա մինչև 2050 թվականը նորաձևության արդյունաբերությունը կծախսի համաշխարհային ածխածնի քվոտայի մեկ քառորդը: Արդյունաբերությունը ոչ միայն վատնում է, այլև աղտոտում է շրջակա միջավայրը. հագուստից ամեն տարի օվկիանոս է արտանետվում կես միլիոն տոննա միկրո մանրաթել, որը համարժեք է ավելի քան 50 մլրդ. պլաստիկ շշի: Միկրոմանրաթելերը ենթադրաբար անհնար է մաքրել և դրանք կարող են հայտնվել սնման շղթաներում:»

Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամ, Նոր տեքստիլ տնտեսություն

Հաճախ մարդիկ չեն գիտակցում, որ տեքստիլ արտարանքի շատ տեսակներ պարունակում են պլաստիկ, ուստի կարևոր է օգտագործել տարբեր նյութեր կամ գիտակցաբար աշխատել տեքստիլ թափոնների, դրանց տարանջատման և վերաօգտագործման հետ:

Շրջանաձև մոդելները ներառում են հագուստի կրկնակի օգտագործումը փոխանակման հարթակի միջոցով կամ թափոնների վերամշակումն առաջնային մանվածքի մեջ (օրինակ՝ Loop-a-life հագուստի համար կամ Reblend՝ Նիդեռլանդներում ինտերիերի ձևավորման համար):

Նորաձևության և շրջանաձև տնտեսության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ: Նորաձևության գործիքների հատուկ հավաքածու շրջանաձև տնտեսությունից, ներառյալ բազմաթիվ սեմինարների կազմակերպման սխեմաները դուք կարող եք գտնել այստեղ :

Էլեկտրոնիկա

Տեխնիկական ոլորտում հեշտ է տեսնել R-սանդուղքի բոլոր քայլերը, ներառյալ վերանորոգումը, վերազինումը, մոդուլային նախագծումը, նյութերի բաժանումը վերաօգտագործման և վերամշակման համար, օրինակ FairPhone-ը և Closing the Loop -ը:

Վերամշակման համար հետաքրքիր են ոչ միայն հեռախոսներն ու համակարգիչներն, այլ նաև կենցաղային տեխնիկան, ինչպես նաև պետք չէ մոռանալ լոգիստիկայի մասին, օրինակ՝ բեռնախցիկով էլեկտրոնային հեծանիվները կամ տուկտուկները:

Թեև վերամշակող արդյունաբերությունում հնարավորություններն ամենուր են, ահա Հեթ Գրոեն Բրեինն առանձնացրել է երեք ռազմավարություն, որոնց վրա կենտրոնանում են շատ ձեռնարկատերեր:

- Բարձրորակ վերամշակում, որպեսզի բացառվի նյութերի արտահոսքը, այդ թվում՝ կրիտիկական հումքի:
- Օգտագործման օպտիմալացում, որպեսզի ապրանքներն ավելի երկար օգտագործվեն:
- Նոր բիզնես մոդելների մշակում, որպեսզի առաջարկների ուշադրության կենտրոնում լինի ոչ թե արտադրանքը, այլ դրա ֆունկցիան:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Թափոններ և պլաստիկ

Թափոնները հաճախ նկարագրվում են որպես նախագծման խնդիր, բայց դա նաև քաղաքականության, լոգիստիկայի և շուկայի խնդիր է, օրինակ, երբ թափոններն ուղարկվում են զարգացող երկրներ:

Թափոնների կառավարումը բարդացնում է այն փաստը, որ դրանք սովորաբար բազմաթիվ տարատեսակ նյութերի խառնուրդ են: Մինչդեռ կարող է դժվար լինել թափոնների մեկ հոսք հավաքելը, իսկ դրա վերամշակումը էներգատար է, ավելի դժվար է թափոնները մաքուր հոսքերի բաժանելը: Օրինակ՝ վերցնենք պլաստիկը: Պլաստիկ արտադրանքները հաճախ նաև տարբեր տեսակի պլաստիկ նյութերի խառնուրդ են: Որպես ոգեշնչող օրինակներ ծանոթացեք Sweepsmart -ին և նրանց թափոնների հավաքման կենտրոններին Հնդկաստանում և Ինդոնեզիայում, որտեղ աղբ հավաքողները դարձել են թափոնների կառավարիչներ:

Պլաստիկը կարելի է գտնել տնտեսության բոլոր ոլորտներում՝ ոչ միայն փաթեթավորման, այլ նաև տեքստիլի և, օրինակ, գյուղատնտեսության ոլորտում: Պլաստիկ իրերն ամենուր են, բայց խնդիրներն անհավասարաչափ են բաշխված: Որոշ երկրներ արտահանում են թափոնները, և տեսեք, թե ինչ տեղի ունեցավ, երբ պլաստիկ թափոններն այլևս անհնար դարձավ ուղարկել Չինաստան: Սա ցույց տվեց շատ կառավարությունների, որ վերամշակման նպատակով թափոնների արտահանումն իդեալական լուծում չէ, և մենք այլընտրանքային լուծումների կարիք ունենք ավելի վաղ փուլում: Երբ մենք կարողանանք վերացնել պլաստիկի օգտագործումը կամ մեկանգամյա օգտագործման պլաստիկը փոխարինել այլընտրանքներով, և ավելացնել պլաստիկ արտադրանքի կյանքի տևողությունը, մենք մեծ հաղթանակի կհասնենք:

Շատ վայրերում բարելավվել է աղբի հավաքումն ու տարանջատումը: Սա կարևոր է պլաստիկ թափոնների շրջակա միջավայր արտանետումից խուսափելու համար:

Պլաստիկի շրջանաձև կիրառման հասնելու համար Հեթ Գրոեն Բրեյնն ընդգծում է հինգ ռազմավարություն, որոնց վրա կենտրոնանում են շատ ձեռնարկատերեր և կառավարիչներ.

1. Խուսափեք անհարկի օգտագործումից՝ հնարավորինս խնայելով պլաստիկ արտադրանքները և փաթեթավորումը:
2. Նախագծել վերաօգտագործման համար, օրինակ՝ գավաթը, որը կարող է օգտագործվել միանգամյա օգտագործման բաժակների փոխարեն:
3. Ապրանքների կամ փաթեթավորման բարձրորակ վերամշակման նախագծեր, ինչպիսիք են մոնո նյութերից պատրաստված պլաստիկ տարաները:
4. Պլաստիկի նպատակային հավաքում, տեսակավորում և վերամշակում, որպեսզի այն հնարավոր լինի վերաօգտագործել բարձր որակով:
5. Բիզնես մոդելներ օպտիմալ օգտագործման համար, օրինակ՝ ապրանքների վաճառքի փոխարեն վարձակալություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար ստուգեք այս ռեսուրսները.

- Նայեք Precious Plastic -ի բաց կոդով պլաստիկի վերամշակման աշխատանքային տարածքներին:
- Բիոպլաստիկի մասին իմացեք ավելին այստեղ:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

- Տեսեք Mr Green Africa–ի օրինակը պլաստիկ փաթեթավորման շրջանաձև համակարգի մասին և ավելի շատ դեպքերի ուսումնասիրություններ Footprints Africa-ի զեկույցում:
- Ստուգեք EMF նոր պլաստիկ տնտեսության ծրագիրը:
- Անցեք այս ուսումնական ուղին, որը ստեղծվել է Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամի կողմից:

Շրջանաձև բիզնես մոդելներ

Շրջանաձև տնտեսության կարևոր կետն այն է, որ այն վերաբերում է բոլորովին այլ տնտեսական համակարգին: Ձեռնարկատերերը և այլ շահագրգիռ կողմերը փորձի և սխալի միջոցով մշակում են այս նոր համակարգի կտորները:

Շրջանաձև բիզնես մոդելները տարբերվում են նրանով, թե ինչպես են դրանք կազմակերպում արժեքային շղթաները կամ նայում են սեփականության կառուցվածքներին: Ավելի պարզ ասած, մեկ ընկերությունն ինքնուրույն չի կարող լինել շրջանաձև բիզնես: Ընկերություններին անհրաժեշտ է համակարգ, որը հեշտացնում է դրանց շրջանաձև լուծումը, և քանի դեռ ամբողջ տնտեսությունը շրջանաձև չէ, կարող է դժվար լինել համագործակցել գծային ընկերությունների և գծային տնտեսության համար նախատեսված կանոնակարգերի շրջանակներում (կարդացեք Նիդեռլանդներում շրջանաձև տնտեսության իրավական մարտահրավերների մասին այս հոդվածում):

Շրջանաձև բիզնես մոդելները հիմնված են եկամտի այս հինգ մոդելների վրա.

1. Մատակարարման շրջանաձև շղթա, փակ օղակով, որը կախված է ուժեղ լոգիստիկ համակարգից (Closing the Loop ECOR and Madaster):
2. Կրկնակի օգտագործում (խուսափեք թափոնների հոսքերից, ինչպիսին է Ycloset-ը):
3. Ապրանքի կյանքի տևողության երկարացում Motorlan, MudJeans և Fairphone):
4. Համօգտագործման տնտեսության հարթակներ (SnappCar):
5. «Ապրանքը որպես ծառայություն» (ապրանքի հասանելիություն սեփականության փոխարեն, ինչպես Signify-ի 'Light as a Service'.)

Դիտարկենք տարբեր ռազմավարություններ: Օրինակ՝ ձեռնարկությունը կարող է ստեղծել նոր բիզնես մոդել կամ հեշտացնել համագործակցությունը ձեռնարկությունների միջև որոշակի արժեքային շղթայում՝ շրջանաձևությունը բարձրացնելու նպատակով: Բիզնեսը կարող է կենտրոնանալ փաթեթավորման և լոգիստիկայի վրա կամ թափոնների հոսքից արժեք ավելացնելու վրա (մեկ անձի թափոնները մեկ այլ անձի ռեսուրսն են): Ձեռնարկությունը կարող է մշակել նոր ապրանքներ, որոնք օգտագործման ավարտից հետո չեն ունենա թափոններ, կամ կառուցել տեղական փակ էկոհամակարգ:

Դուք կարող եք գտնել մանրամասն ակնարկ, թե ինչպես են բիզնեսները ստեղծում շրջանաձև բիզնես մոդելներ այստեղ:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Շրջանաձև արժեքային շղթայի մեկնարկ՝ գծայինից շրջանաձևի անցնելու փոխարեն

Ստարտափների հետ աշխատելը, որոնք առաջին իսկ օրվանից ունեցել են շրջանաձև լուծում դառնալու բացահայտ մտադրություն, շատ տարբեր է գոյություն ունեցող ձեռնարկությունների հետ աշխատելուց՝ գծայինից ավելի շրջանաձև մոդելի վերածելու համար: SITRA -ն նրանց անվանում է շրջանաձև բնիկներ և շրջանաձև ադապտերներ: Իմփաքթ հաբ Դոնոստիան, օրինակ, իր Oleku ծրագրով կենտրոնացել է վերջինիս՝ շրջանաձև ադապտերի վրա:

Որպես ձեռնարկություններին աջակցող հիմնադրամ դուք կարող եք դիտել CIRCO -ի ուսուցումը փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար և կարդալ Քոնոնի Բեկկերի ապրանքներ որոնք երկարակյաց են գիրքը:

Շրջանաձև բնիկները և շրջանաձև ադապտերները կարող են միմյանց համար օգտակար լինել, քանի որ երկուսն էլ ունեն իրենց ուժեղ կողմերը: Իր բիզնես մոդելի հիմքում ընկած շրջանաձև լուծում ունեցող ստարտափը կարող է դա օգտագործել՝ բրենդի ազդեցիկ պատմություն ստեղծելու համար: Սա գրավիչ է անցումային ընկերության (կամ այլ կազմակերպությունների) համար, որն իր հերթին կարող է առաջարկել մատակարարման շղթա կամ մուտք դեպի շուկա: Մտածեք մի ստարտափ, որը վաճառում է շրջանաձ կոմպոստ մեծածախ ֆերմերային ապրանքների խանութում կամ վերանորոգված մարտկոցներով սնվող էլեկտրական լոգիստիկ տրանսպորտային միջոցներ, որոնք ստացվել են էլեկտրոնային թափոններից:

Կարևոր է նշել, որ որոշ ձեռնարկություններ, որոնք դուք համարում եք որպես շրջանաձև ադապտերներ, պարտադիր չէ որ տեղյակ լինեն, թե ինչ է շրջանաձևությունը, բայց, այնուամենայնիվ, կարող են արդեն կիրառել առնվազն որոշ շրջանաձև սկզբունքներ:

Գծայինից շրջանաձևի անցնելու ավելի շատ ոգեշնչման համար կարող եք նաև դիտել այս շրջանաձև սպասարկման բիզնես մոդելները:

Շրջանաձև բիզնես մոդելների ֆինանսավորում

Ընդհանուր առմամբ, ֆինանսավորումը հասանելի է մասնակցության, փոխառության կամ պետական ֆինանսավորման տեսքով:

Ֆինանսավորման ճիշտ տեսակը կախված է այնպիսի հանգամանքներից, ինչպիսիք են շրջանաձև բիզնես մոդելի տեսակը և կազմակերպության զարգացման փուլը:

Նոր նախաձեռնության համար ֆինանսավորում հայթայթելը դժվար է, քանի որ փորձի բացակայության պայմաններում այն ավելի ռիսկային է ընկալվում:

Շրջանաձև բիզնես մոդելներն ունեն ռիսկի և եկամտաբերության այլ պրոֆիլ, քան ներկայիս գծային մոդելները: Ընկերություններն ու ֆինանսիստները դա հաշվի կառնեն: Կարևոր տարբերություններ կան ֆինանսական հոսքերի փոփոխության, գործընկերներից և հաճախորդներից կախվածության և ռիսկերի բարդության մեջ: Շրջանաձև ստարտափների դեպքում դա կարող է ավելի բարդ լինել, երբ դիտարկվում է «Ապրանքը որպես ծառայություն» (հասանելիություն սեփականության փոխարեն, օրինակ՝ ավտոմեքենայի կարճաժամկետ վարձակալություն, ինչը նշանակում է շատ ակտիվներ հաշվեկշռում)

կամ վճարիր օգտագործման համար (վճարումների կատարում երկար ժամանակահատվածում՝ այդպիսով ազդելով դրամական միջոցների հոսքի վրա):

Շրջանաձև բիզնեսների ֆինանսավորման ռիսկերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս.

- այս տեսանյութը շրջանաձև ֆինանսների նորարարությունների մասին,
- այս հաշվետվությունը շրջանաձև մոդելների հետ կապված ֆինանսական ռիսկերի մասին:

Կան բազմաթիվ պոտենցիալ ֆինանսավորող գործընկերներ, որոնց պետք է հաշվի առնել շրջանաձև տնտեսությամբ զբաղվող ձեռնարկատերերի աջակցության ծրագրերի համար.

- Մարդասիրություն (ընտանեկան գրասենյակներ).
- ՀԿ-ներ/բարեգործական կազմակերպություններ, ինչպիսիք են Oxfam-ը:
- GIZ-ի նման պետական ֆոնդեր:
- Մասնավոր ֆոնդեր, ինչպիսիք են DOEN-ը և MAVA հիմնադրամները:
- Մասնավոր նախաձեռնություններ, ինչպիսիք են WEF-ը:
- B2C. անդամակցություններ, վճարում յուրաքանչյուր օգտագործման համար:
- B2B՝ ֆինանսավորում արժեշղթայից: Գործընկերներ (վաճառք կամ ներդրումներ):
- Խնդիրները կարող են նախաձեռնվել տարբեր կազմակերպությունների կողմից՝ ստեղծելով շրջանաձև լուծման պահանջարկ, ինչը հանգեցնում է հետազոտության և զարգացման կամ փորձնական/գործարկման հաճախորդի համար դրամական մրցանակի:

Աշխատատեղերի ստեղծման հնարավորություններ

Շրջանաձև տնտեսությունն ազդեցություն կունենա աշխատաշուկայի վրա՝ սկսած աշխատատեղերի կրճատումից, որոնք այլևս համակարգի մաս չեն կազմում (ոչ կայուն արտադրանք) մինչև նոր աշխատատեղերի ստեղծում: Շրջանաձև տնտեսությունը կարող է նաև ազդեցություն ունենալ աշխատատեղերի որակի վրա: OECD -ն ունի ակնարկ այս հարցի վերաբերյալ:
Սա նշանակում է, որ կարևոր է հաշվի առնել, թե որ աշխատատեղերն են ազդում նախաձեռնության վրա և ներառել մարդկանց վերապատրաստման կամ որակավորման հնարավորությունները նոր համակարգին անցնելու ժամանակ:
Աջակցելով ձեռնարկատերերին և ձեռնարկություններում որդեգրել շրջանաձև նախագծման սկզբունքները և աջակցել շրջանաձև տնտեսության զարգացմանը, ձեռնարկություններին աջակցող կազմակերպություններն իրենց համար հնարավորություններ են ստեղծում ներգրավվելու տեղական, տարածաշրջանային, ազգային և անդրտեղային քաղաքականության մեջ՝ կապված համաճարակի/ճգնաժամի վերականգնման, կանաչ անցումների/գործարքների և աշխատատեղերի ստեղծման հետ և չհաշված այս երկխոսությունների հետ կապված բիզնեսի զարգացման բազմաթիվ հնարավորությունների մասին:
Դուք կարող եք շրջանաձև տնտեսության աշխատանքի հնարավորությունների մասին ավելի շատ օրինակներ կարդալ այստեղ Circle Economy Jobs Initiative-ից, որոնք նույնպես դիտարկում են մասնագիտական ուսուցման հնարավորությունները: Նաև Young Africa-ն ապահովում է մասնագիտական ուսուցում նոր տնտեսության ձեռներեցների և աշխատակիցների համար:

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորիների համար

Նախապատրաստում

Ոգեշնչեք ձեր թիմին. ինչպե՞ս է շրջանաձև տնտեսությունը կապված նրանց աշխատանքի և հավակնությունների հետ:

Կազմակերպեք սեմինար կամ վերապատրաստման ճամբար ամբողջ թիմի հետ, ներառյալ՝ այն մարդկանց, ովքեր ուղղակիորեն ներգրավված չեն լինի Շրջանաձև տնտեսության ծրագրում, որտեղ դուք միասին ուսումնասիրում եք շրջանաձև տնտեսության հայեցակարգերը և օրինակները:

Դուք կարող եք քննարկել, թե ինչպես են այս հասկացությունները կապվում յուրաքանչյուրի աշխատանքի հետ և ազդում գործընկերության, հավակնությունների և հնարավորությունների վրա: Օրինակ, հաշվի առեք նման գործողությունները հեշտացնելու հետևյալ եղանակները.

- Կիսվեք այս ընթերցանության ցանկով ձեր գործընկերների հետ՝ նրանց ծանոթացնելու շրջանաձև տնտեսության աշխարհին: Այստեղ շատ նյութ կա, այնպես որ ձեզ շատ ժամանակ տվեք այդ ամենը մշակելու համար:
- Քննարկեք նրանց հետ միտումները և շրջանակները և ինչպես են դրանք առնչվում իրենց աշխատանքին, կազմակերպության առաքելությանը և ռազմավարությանը:
- Միասին կամ թիմերով քարտեզագրեք տեղական էկոհամակարգը (տես հաջորդ բաժինը):
- Ավարտեք առաջարկվող սեմինարները միասին՝ դրանք կիրառելով ձեր սեփական կազմակերպության, ծառայությունների և ապրանքների համար:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Հնարավորությունների վերլուծում

Հաջորդ քայլը շրջանաձև տնտեսության հնարավորությունների վերլուծությունն է ձեր տարածքային համատեքստում: Մտածեք, արդյո՞ք «Շրջանաձև տնտեսություն» տերմինն արդեն սովորական է ձեր տարածքում, կամ եթե այլ հասկացություններ և տերմինաբանություն է օգտագործվում: Հարցրեք ինքներդ ձեզ, թե ո՞ւմ պետք է վերցնեք այս հայեցակարգը հասկանալու և ընդունելու համար և ինչպես հասնել դրան: Հարցերը, որոնց պետք է պատասխանեք որպես թիմ, թվարկված են ստորև.

- Ցանկանու՞մ եք կենտրոնանալ շրջանաձև տնտեսության որոշակի տեսակի, մոդելի, հատվածի կամ արժեշղթայի վրա:
- Դուք հնարավորություն տեսնու՞մ եք համագործակցելու ավելի մեծ կազմակերպության հետ, օրինակ՝ ընկերության, պետական կազմակերպության կամ համալսարանի հետ և զարգացնելու շրջանաձև բիզնես մոդելներ նրանց հետ կամ նրանց համար:
- Կամ հարկավո՞ր է սկսեք ստեղծել շրջանաձև տնտեսության նոր մոդելներ, որոնք պետք է մշակվեն և փորձարկվեն համայնքում:
- Կսկսե՞ք անհատական երկխոսություններից՝ շրջանաձև տնտեսության հայեցակարգը գոյություն ունեցող նախաձեռնությունների հետ կապելով, թե՞ հանրային քարոզարշավով կամ փորձագիտական միջոցառումով:

Տաղանդների բացահայտում

Երբ դուք ողջունում եք ներ տաղանդները ձեր թիմում, ներդրումներ կատարեք նրանց տեսլականի, հավակնությունների և ընթացիկ նախագծերի և արտաքին հնարավորությունների հետ կապի ըմբռնման մեջ: Միտումները և շրջանակները կարևոր են, որպեսզի ամբողջ թիմը հասկանա, այլ ոչ միայն շրջանաձև տնտեսության ծրագրի ղեկավարները: Ձեր կազմակերպութան համար կարևոր է օրինակ ծառայելը: Ահա հիմնական դերերը, որոնք պետք է հաշվի առնել ձեր թիմի համար, լրիվ դրույքի համարժեքությունը կախված է ձեզ հասանելի ռեսուրսից.

- Համակարգող՝ անձ, ով միավորում է ամեն ինչ՝ գործընկերությունից մինչև գնահատում:
- Առաջատար սեմինարավար. ծրագրի մասնակիցների համար ծանոթ անձ:
- Կոհորտային մենեջեր. մյուս ծանոթ դեմքը, որը համակարգում է բոլոր գործնական հնարավորությունները:
- Մենթորի համակարգող. կարող է նաև ինտեգրվել համակարգողի կամ խմբային մենեջերի դերերում:
- Էկոհամակարգի համակարգող. առանձին դեր, որը կենտրոնացած է կոնկրետ խնդրի կամ ոլորտի ցանցի վրա:
- Միջոցառումների մենեջեր՝ ծրագրին առնչվող տարբեր միջոցառումների պլանավորում և կազմակերպում:
- Շրջանաձևության փորձագետ(ներ). ձեր ծրագրում տեխնիկական գիտելիքներ բերողները:

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորիների համար

Էկոհամակարգի կառուցում

Սկսենք շրջանաձև տնտեսության զրույցը

Որպեսզի այս համակարգային փոփոխությունը տեղի ունենա, մեզ անհրաժեշտ են մի քանի շահագրգիռ կողմեր, որոնք փոխազդում են՝ ընկերություններից մինչև սպառողներ, ՀԿ-ներից և կառավարություններից, այդ իսկ պատճառով մենք օգտագործում ենք «էկոհամակարգ» տերմինը: Էկոհամակարգի կառուցումը ենթադրում է ընկերությունների, ֆինանսական հաստատությունների, գիտելիքների ինստիտուտների, պետական կազմակերպությունների և ցանկացած այլ սուբյեկտների ներգրավում երկխոսության մեջ: Անհրաժեշտ է մշտական ուշադրություն՝ սկսած նախնական երկխոսությունների հեշտացումից մինչև էկոհամակարգի աճ և պահպանում:

Շրջանաձև տնտեսության պայմաններում ընկերությունները և կազմակերպությունները պետք է համագործակցեն. դուք չեք կարող միայնակ շրջանաձև ընկերություն լինել:

Նոր շրջանաձև լուծում ստեղծելը շահագրգիռ կողմերից պահանջում է փոխել իրենց դերը, ռիսկի դիմել և համագործակցել ուրիշների հետ, ինչը կարող է լինել ոչ բնական և վախեցնող, սակայն անհրաժեշտ է համակարգային փոփոխություններ ստեղծելու համար:

Ձեռնարկություններին աջակցող հիմնադրամները կարող են կարևոր դեր խաղալ տեղական, տարածաշրջանային և/կամ ազգային էկոհամակարգի կառուցման համար անհրաժեշտ կապերի ստեղծման գործում: Օրինակ՝ ստուգեք Իմփաքթ հաբ Ամստերդամի նախագիծը՝ շրջանաձև էկոհամակարգ ստեղծելու համար, և դրա զեկույցը՝ քաղաքային էկոհամակարգ ստեղծելու վերաբերյալ:

Էկոհամակարգը, որպես համակարգային ցանց, կարող է կենտրոնանալ արժեքային շղթայի վրա, որը ներառում է ընկերության մատակարարներին, օրինակ՝ տեքստիլ կամ շինարարության ոլորտներում, կամ դուք կարող եք կենտրոնանալ տարածաշրջանի վրա, ինչպես տեսնում ենք Իսպանիայի Բասկերի շրջանի Մոնդրագոնում կամ Ամստերդամի նավահանգստում:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Այս էկոհամակարգերում դուք կգտնեք ռեսուրսների, փողի, էներգիայի և գիտելիքի հոսքեր: Տարբեր տեսակի դերակատարների միջև այս հոսքերի պատճառով մենք այն անվանում ենք էկոհամակարգ՝ բնական աշխարհի նմանությամբ:
Դուք կարող եք քարտեզագրել էկոհամակարգը: Որպես օրինակ, այստեղ բերենք Ավստրալիայից մի ընկերություն, որն ունի մաքուր էներգիայի և շրջանաձև տնտեսության ստարտափներ: Որպես այլընտրանք՝ ահա Metabolic-ի Բոուլդեր քաղաքի շրջանաձև ճանապարհային քարտեզը:

Յուրաքանչյուր շահագրգիռ կողմի համար էկոհամակարգում ներգրավվելու տարբեր պատճառներ կարող են լինել: Օրինակ՝ մի ընկերություն, որը պայքարում է հումքի աճող արժեքի դեմ, կամ կառավարություն, որը ցանկանում է աշխատատեղեր ստեղծել կամ նվազեցնել աղտոտումը:

Կարևոր է ընդունել, որ փոխազդեցություն-ները և գործողությունները պետք է տեղի ունենան տարբեր մակարդակներում՝ սկսած մեկ կամ մի քանի անհատներից ընկերությունների ներսում, մինչև տարածաշրջանային հաստատություններ (ինչպես թափոնների կառավարումը), օրինակ՝ ազգային օրենսդրություն: Ընկերության համար նրանց մասնակցությունը ենթադրում էր նոր նյութի ընտրություն, լոգիստիկայի փոփոխություն կամ նոր բիզնես մոդելի մշակում: Համոզվեք, որ հասկանում եք տարբեր շահագրգիռ կողմերի (և նրանց, ովքեր դեռ ներգրավված չեն, բայց պետք է ներգրավված լինեն) կարիքները, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք շրջանաձև տնտեսությունը ստեղծում է նրանց համար, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, փոփոխվող տնտեսության և կլիմայի պայմաններում կայունության բարձրացումը, մատակարարման շղթաներում ռիսկերի նվազեցումը, նոր հաճախորդների որոնումը և ծախսերի նվազեցումը: Ահա, թե ինչպես կարող եք ստեղծել շահեկան առաջարկ և գործընկերներ ներգրավել շրջանաձև տնտեսության էկոհամակարգում:
Էկոհամակարգում աշխատելը պահանջում է փոխազդեցություն, վստահություն, ընդհանուր գործունեություն և ընդհանուր նպատակներ: Նախ ստեղծեք կապեր, քննարկեք ակնկալիքները, զարգացրեք ընդհանուր լեզու և համաձայնություն: Այնուհետև, ընդլայնեք ցանցը՝ միաժամանակ վստահություն ստեղծելով: Միջոցառումների համատեղ իրականացումը, կատարողականի հիմնական ցուցանիշների հաստատումը և դրանց հասնելու համար ռեսուրսների բաշխումը, օգնում են այս բոլորին: Համոզվեք, որ գնահատում եք առաջընթացը և բացահայտում ապագա հնարավորու-թյունները: Ստեֆանի Սքոթի հոդվածը և դիագրամը, որը ներկայացնում է արդյունավետ ձեռնարկատիրական էկոհամակարգերի ցանցային տեսակետը, առաջարկում է ավելի խորը պատկերացում այս թեմայի վերաբերյալ:

Էկոհամակարգի խթանում

Էկոհամակարգը մշտական ուշադրության կարիք ունի: Դուք կարող եք հաշվի առնել իրազեկման միջոցառումներ և արշավներ անցկացնել տեղեկագրերի և սոցիալական լրատվամիջոցների միջոցով: Միասին կամ առանձին հրավիրեք մարդկանց և կազմակերպություններին, ովքեր արդեն ակտիվորեն աշխատում են շրջանաձև տնտեսության մեջ, ինչպես նաև նրանց, ովքեր նոր են այս թեմայում կամ անբավարար են ներկայացված ոլորտում:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Նպաստել ստարտափների, ՓՄՁ-ների և այլ շահագրգիռ կողմերի համար սեմինարների անցկացմանը, որպեսզի նրանք ավելի լավ ծանոթանան թեմային և կենտրոնանան որոշակի ոլորտների վրա: Իմփաքթ հաբ Ամստերդամն առաջարկում է մի շարք սեմինարներ, կազմակերպում է դաշտային ուղևորություններ և հյուրընկալում է շրջանաձև և գծային ընկերություններ LinkedIn խմբում. մտածեք նաև դրանով զբաղվելու մասին:

Ահա մի քանի օգտակար ռեսուրսներ՝ ծանոթանալու համար. դու կլինե՞ս իմ գործընկերը. Ինը քայլ՝ բացահայտելու և հաստատելու հաջող համագործակցությունները շրջանաձև տնտեսության համար՝ ըստ Circle Economy-ի:

Ձեռնարկություններին աջակցող հիմնադրամները կարող են կարևոր դեր խաղալ էկոհամակարգում ավելի շատ կազմակերպություններ ներգրավելու և հզոր ձեռնարկատերերի համար նոր հնարավորություններ գտնելու գործում:

Սահմանափակ տնտեսությամբ զարգացող շուկաների համար կարող է օգտակար լինել էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել պոտենցիալ շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացմանը: Քանի որ շրջանաձևության լեզուն դեռ լայն տարածում չի գտել: Արշավները, որոնք օգնում են թեման հասցնել լսարանի հնարավորինս լայն շրջանակին, կարող են միայն դրական լինել այս ոլորտում աշխատող ձեռներեցների համար:

Էկոհամակարգերի քարտեզագրում

Էկոհամակարգի քարտեզագրումը պետք է նախորդի բոլոր մյուս ծրագրային գործողություններին, քանի որ դա ընդգրկում է այն համատեքստը, որտեղ դուք կգործեք՝ բացահայտելով շահագրգիռ կողմերին, որոնք պետք է ներառվեն ծրագրում և կողմնորոշեն ձեռնարկատերերին էկոհամակարգում:

Օգտագործեք այս **էկոհամակարգի քարտեզագրման գործիքը** զեկույց կազմելու համար, որը կարող է հիմք հանդիսանալ ձեր ծրագրի մշակման և ձեր համատեքստում դիրքավորվելու համար: Դա մեծ աշխատանք է, բայց կարևորագույն հիմքեր է դնում:

«Մեր շրջանաձևության ծրագրի ամենագեղեցիկ պահերն այն օրերն էին, երբ մենք անցկացրեցինք ELT միջոցառումներ: Մենք կազմակերպեցինք դրանցից երեքը՝ ծրագրի մեկնարկը, ցանցային միջոցառումը և ծրագիրը եզրափակող ցուցադրական օրը: Հիանալի էր տեսնել, թե ինչպես են բոլորը շփվում միմյանց հետ, կապ հաստատում և էկոհամակարգ ստեղծում: Ես կոչ եմ անում ապագա կազմակերպիչներին հնարավորինս շատ «դեմ առ դեմ» ձևաչափեր ստեղծել, քանի որ ազդեցությունը շատ ավելի մեծ է լինելու, իսկ կապերը՝ շատ ավելի արգասաբեր»:

Մարինա, Իմփաքթ հաբ Բարսելոնա

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորիների համար

Ծրագրային ինտեգրումներ

Ծրագրերի տեսակները

Կան տարբեր տեսակի ծրագրեր, որոնք պետք է հաշվի առնել: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակները, վերջնական արդյունքները և նկատառումները:

1. Ծրագրեր, որոնք ուղված են շրջանաձև տնտեսության (զարգացման տարբեր փուլերում) ստարտափներին աջակցելուն:
2. Փոքր և միջին բիզնեսին աջակցելուն ուղղված ծրագրերը գծայինից անցնում են շրջանաձևի՝ շրջանաձև տնտեսության շրջանակներում գործողություններն ինտեգրելով ավելի լայն ծրագրի կամ առաջարկելով աջակցության փաթեթ, որը հստակ կենտրոնացած է շրջանաձև գործունեության վրա:
3. Խնդիրներ, որոնք գալիս են էկոհամակարգի այնպիսի գործընկերներից, ինչպիսիք են կառավարությունները, ՀԿ-ները կամ կորպորացիաները:
4. Վենչուրների համակարգային ստեղծում՝ ի պատասխան տեղական մարտահրավերների:

Կենտրոնացում մեկնարկի և աճի փուլերի վրա

Այս գործիքակազմը կենտրոնացած է ստարտափի կամ աճի փուլում գտնվող ձեռնարկատերերի աջակցության ծրագրերում շրջանաձևության ներդրման վրա, օրինակ, ինկուբատորների կամ աքսելերատորների միջոցով: Այս երկու փուլերում ձեռնարկատերերի կարիքների և փորձի մեջ կան որոշ տարբերություններ, և դա ազդում է ծրագրերի շրջանակներում ձեր կողմից ցուցաբերվող աջակցության տեսակի և դրա ձևաչափի վրա:

Կարճ ասած.

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Մեկնարկային փուլ.

Բիզնես սկսելու համար հմտությունների, կապերի, վստահության և պարտավորության ձևավորում:

Նման ծրագրերը հակված են միավորելու մի շարք հաջորդական և խմբերի վրա հիմնված աջակցության մեխանիզմներ, այդ թվում՝ սեմինարներ, վերապատրաստման օրեր, բութքեմփի ոճով պրակտիկաները, մասնագետների ուսուցում, մենթորություն, փիթչինգի միջոցառումներ և կանոնավոր խմբերի վրա հիմնված ստուգումներ: Ձեռնարկատերերը պետք է վերապատրաստում և աջակցություն ստանան՝ կախված իրենց հատուկ արդյունաբերությունից և շուկայից:

Աճի փուլ.

Սկսնակ բիզնեսից անցում դեպի կայուն և ներդրումային գրավիչ բիզնեսի:

Աջակցությունն ավելի շատ հարմարեցված է ձեռնարկատերերի և ձեռնարկությունների հատուկ կարիքներին, քան սկսնակ փուլում գտնվող ծրագրերին: Ծրագիրը կունենա ավելի քիչ կառուցվածքային ուսումնական պլան՝ բիզնեսն ամրապնդելու համար հօգուտ մասնագիտացված գիտելիքների ներգրավման: Յուրաքանչյուր ծրագիր պետք է սկսվի մանրակրկիտ ախտորոշմամբ, որի ընթացքում ձեռնարկատերը կազմում է զարգացման ծրագիրը: Կարող է մշակվել հատուկ աջակցություն՝ հիմնվելով ախտորոշիչ և առկա տվյալների և հաճախորդների սեգմենտի մասին գիտելիքների արդյունքների վրա:

Ստորև բերված են մի շարք նկատառումներ և առաջարկվող գործողություններ, որոնք պետք է իրականացվեն որպես ձեր ծրագրի մշակման և իրականացման մաս՝ այս ծրագրի շրջանակներում ձեր կողմից աջակցվող ձեռնարկություններում շրջանաձև նախագծման սկզբունքները ներդնելու համար:
Սա սպառիչ մենյու չէ, այլ նմուշ, որն արդեն փորձարկվել է ձեռնարկատերերի աջակցության կազմակերպությունների կողմից Իմփաքթ հաբի շրջանաձև տնտեսության փորձնական ծրագրերի շրջանակներում:
Նախքան ուսումնասիրենք այն գործողությունները, որոնք դուք կարող եք իրականացնել ձեր ծրագրերի շրջանակներում, եկեք սկսենք ձեռնարկատերերին որակյալ աջակցություն ցուցաբերելու որոշ հիմնարար սկզբունքներից:

Ծրագրի նախագծում

Ահա մի քանի նկատառումներ շրջանաձև ծրագիր նախագծելու համար.

- Հասկացեք վենչուրների զարգացման փուլը և նրանց առջև ծառացած մարտահրավերները՝ նպատակային աջակցություն տրամադրելու համար, որը կենտրոնացած է խնդիրների լուծման վրա:
- Ստորև դիագրամը ներկայացնում է աջակցության տեսակի ակնարկ, որը սովորաբար հարմար է վենչուրին՝ կախված դրա զարգացման փուլից և շրջանաձևության կարգավիճակից: Սա շատ բարձր մակարդակ է, բայց դա օրինակ է այն բանի, թե ինչպես աջակցությունը կարող է տարբեր լինել՝ կախված երկու նկատառումներից:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար



- Ի՞նչ եք ուզում իրականացնել բիզնեսի կամ արժեքային շղթայի միջոցով ծրագրի ավարտին: Ծրագրի ավարտին ներկայացնում ե՞ք ցուցադրություն որոշակի լսարանի համար: Ի՞նչ արդյունքներ եք ցանկանում տեսնել ձեր ծրագրի մասնակիցներից և էկոհամակարգից:
- Կատարեք ախտորոշիչ վարժություն, որը ներառում է շրջանաձև տնտեսության հարցեր՝ խնդիրները, նպատակները և աջակցության կարիքները բացահայտելու համար:

- Աջակցեք նախանմուշի պատրաստմանը, փորձարկմանը և վավերացման այլ գործողություններին՝ իրական իրավիճակներում լուծումները փորձարկելու համար: Խրախուսեք վենչուրներին հնարավորինս շուտ փորձարկել:
- Ներառեք արժեքային շղթայի գործընկերներին տեղում այցելություններին՝ միմյանց ավելի լավ ճանաչելու համար: Տարբերակ կարող է լինել այն, որ բոլոր վենչուրները միջոցառմանը հրավիրեն մեկից երեք (պոտենցիալ) արժեշղթայի գործընկերների, որոնց հետ կցանկանային (ավելի շատ) աշխատել:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

- Ներառեք ուղղակի (առցանց կամ առկա) հանդիպումներ փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ: Համոզվեք, որ ձեր բյուջեում ներառեք խոսնակի կամ սեմինարավարի վճարները, ինչպես նաև այս հանդիպումների համար նախատեսված սենյակներն ու սնունդը:
- Ներառեք գործնական միջոցառում փորձագետների, մենթորների կամ գործընկերների լսարանի հետ՝ վերջնական իրադարձությունից մի քանի շաբաթ առաջ հետադարձ կապի համար: Այսպիսով, ծրագրի մասնակիցներն արդեն կարող են ստանալ արժեքավոր խորհուրդներ և կապեր, իսկ ամփոփիչ ներկայացումը/պրեզենտացիան կբարելավվի:
- Այս հոդվածում Իմփաքթ հաբ Ամստերդամը նկարագրում է սկսնակ ձեռնարկություններում շրջանաձև ներդրման հինգ եղանակ: Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչպես կարող է ձեր ծրագիրը կատարել այս ուղեցույցները և ինչպիսին այն կարող է լինել գործնականում:
- Որքան շուտ հնարավոր լինի աջակցություն ցուցաբերել բիզնեսին շրջանաձև դառնալու համար, այնքան ավելի հեշտ կլինի դա անել, քանի որ ավելի հեշտ է ավելի վաղ հարմարեցնել բիզնեսի մոդելը: Պլանները փոխելն ավելի հեշտ է, քան փոխել կայացած համակարգերը, գործընթացները և մշակույթը:

Ազդեցության կառավարում

Երբ խոսքը վերաբերում է ազդեցությանը, դուք կարող եք կենտրոնանալ մի քանի մակարդակների վրա՝ ձեռնարկատերերի և վենչուրային կապիտալի ազդեցությունը, ծրագրի ազդեցությունը, ձեր կազմակերպության ազդեցությունը և ձեր էկոհամակարգի ազդեցությունը: Դուք նաև կցանկանաք գնահատել ձեր ծրագրի ազդեցությունը ձեռնարկատերերի, վենչուրային կապիտալի ձեռնարկությունների և էկոհամակարգերի վրա: Համոզվեք, որ նախապես հստակեցրեք, թե ինչպիսի ազդեցության հաշվետվություն է պահանջվում ձեզ և ձեր գործընկերների համար և հնարավորինս ճշգրիտ համապատասխանեցրեք այն ձեր կազմակերպության ռազմավարությանը: Կարող է գայթակղիչ լինել զեկուցել ազդեցության բազմաթիվ թիրախների մասին, քանի որ ցանկանում եք զգալի ազդեցություն ունենալ: Բայց դա կարող է դժվար լինել իրականացնել ավելի երկար ժամանակահատվածում (ձեզ հարկավոր է շատ տվյալներ հավաքել), և միգուցե դուք ուղղակիորեն չեք ազդում այս բոլոր նպատակների վրա, և այդ դեպքում իրականում ինչ ազդեցություն կարող եք պահանջել: Այն օգնում է սահմանել ձեր տեսլականը և այն, ինչի վրա իսկապես ցանկանում եք ազդել և փոխել: Դրանից հետո դուք կարող եք մշակել հիմնական չափումներ ըստ ոլորտների՝ չափելու ձեր կատարածի տարբերությունը:
Որպես օրինակ վերցնենք Իմփաքթ հաբի շրջանաձևության ծրագիրը: Դրա ցանկալի ազդեցությունը կայունության ներդրումն էր՝ որպես նախագծման սկզբունք փոքր և աճող բիզնեսի ոլորտում, ինչը թույլ տվեց նրանց դրական ներդրում ունենալ կլիմայի փոփոխության դեմ պայքարում և կենսաբազմազանության պահպանման գործում:

1. Աջակցություն շրջանաձև տնտեսության ձեռնարկությունների զարգացմանը:
2. Իրազեկության բարձրացում շրջանաձև տնտեսության և նոու-հաուի վերաբերյալ:
3. Շրջանաձև տնտեսությամբ ստարտափների էկոհամակարգի ամրապնդում:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Վերը նշվածին համապատասխան առաջընթացը չափելու համար մենք մշակել ենք վերջնական արդյունքների, ելքերի և ցուցանիշներ սերիաներ: Դրանց օրինակները կարող եք տեսնել այս **Ազդեցության կառավարման շրջանակում**, որը կարող եք հարմարեցնել՝ ելնելով ձեր սեփական մտադրություններից և առաջնահերթություններից:

Բացի քանակական ազդեցության չափումից, կարևոր է դիտարկել նաև որակական ազդեցությունը: Ծրագրի սկզբում օգտագործեք ելակետային հարցումներ, իսկ ծրագրի վերջում՝ վերջնական:
Եթե կարողանաք կառուցվածքային հարցազրույցներ անցկացնել մասնակիցների և գործընկերների հետ, կարող եք ավելին իմանալ նրանց ճանապարհորդության, քաղած դասերի և այլ կարիքների մասին, որոնց համար կարող եք ծրագիր մշակել: Այն նաև օգնում է մտածել նոր գործընկերների մասին, որոնց ցանկանում եք հրավիրել էկոհամակարգ:

Ահա **հիմնական, վերջնական հարցազրույցի հարցերի մի քանի օրինակներ**, որոնք կարող են օգտագործվել ծրագրի մասնակիցների հետ: Ծանոթացեք նրանց և հարմարեցրեք ձեր սեփական ծրագրին:

Մասնակիցների հետ վերանայման հանդիպումներն առաջարկում են որակյալ տվյալներ հավաքելու ևս մեկ եղանակ: Դրանք թույլ են տալիս մասնակիցներին միմյանց հետ կիսվել փորձով և թույլ են տալիս ձեզ ՝ աջակցող հիմնադրամի մասնագետին, արագ հասկանալ ծրագրի այն բաղադրիչները, որոնք օգտակար են եղել կամ չեն եղել: Պատմությունները, որոնք դուք կլսեք շրջանաձև տնտեսության ձեռնարկատերերից, կարևոր կլինեն նոր գործընկերներ և ներդրողներ ներգրավելու համար:

Կորպորացիաները, որոնք ցանկանում են չափել իրենց առաջընթացը շրջանաձև ոլորտում, կարող են օգտագործել Circulytics-ը:

Ծրագրի ֆինանսավորում

Կախված ծրագրի տեսակից, որը դուք առաջարկում եք, ֆինանսավորման չափը տարբեր կլինի: Տեղական համատեքստում ուշադրություն դարձրեք պետական մարմինների, ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների կողմից շրջանաձև տեսությանը (կամ հարակից տերմինաբանությանը) հատկացված ֆոնդերին:

Կարևոր է նաև օգնել ձեր բիզնեսին գտնել և ապահովել կապիտալ՝ իրենց շրջանաձև նորարարություններն իրականացնելու համար, սովորաբար 10,000-ից 1 միլիոն € սահմաններում: Ֆինանսավորումը ստանալուց հետո ձեր ծրագրի պատրաստումը կարող է տևել առնվազն վեց ամիս, այնպես որ նախապես պլանավորեք:

Հրահանգիչների պատրաստում

Ներքին կամ արտաքին հրահանգիչները կարող են ունենալ կամ չունենալ փորձ շրջանաձև տնտեսության, ձեռնարկատիրական աջակցության կամ որոշակի արժեքային շղթաների հետ կապված ոլորտներում: Անկախ նրանից, դուք պետք է պլանավորեք ներբեռնման գործընթաց բոլոր հրահանգիչների համար, որպեսզի դրանք համապատասխանեցնեք ձեր մեթոդաբանությանը և համոզվեք, որ յուրաքանչյուրն ունի ելակետային գիտելիքներ որոշակի առարկաների և ոլորտների վերաբերյալ:

Այս մասին լրացուցիչ ուղեցույցին ծանոթանալու համար ացելեք «Պատրաստվիր» բաժինը:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Հետազոտում և ճիշտ ձեռնարկատերերի ու վենչուրների ընտրություն

Ձեր որոնման և ընտրության ռազմավարությունը կենսական նշանակություն ունի ձեր ծրագրի հաջողության համար: Դուք պետք է ճիշտ փուլում գտնեք ձեռներեցներ և վենչուրային ձեռնարկություններ, որպեսզի առավելագույնս օգտվեք նրանց տրամադրած հնարավորություններից և աջակցությունից: Հարմարեցրեք ձեր ստանդարտ մասնակցության պայմանները, դիմումի ձևը և ընտրության ընթացքը՝ ներառելով շրջանաձև տնտեսությանը հատուկ չափանիշներ:

Ահա մի քանի հարցեր, որոնց պետք է պատասխանեք ձեր հետախուզության և ընտրության գործընթացի ժամանակ:

Սկսնակ փուլերի աջակցության ծրագրեր.

Ձեռնարկատիրոջ մասին

- ➔ Ի՞նչ գիտելիքներ ունի ձեռնարկատերը շրջանաձև տնտեսության մասին:
- ➔ Որքանո՞վ է ձեռնարկատերը հավատարիմ ծրագրին և արդյոք նա ունի իր թիմը (առնվազն մեկ այլ անձ, ով պատրաստ է մասնակցել ծրագրին):
- ➔ Որո՞նք են նրանց հավակնությունները և ինչպես են դրանք համահունչ շրջանաձև տնտեսության ձեր առաքելությանը:
- ➔ Ունե՞ն արդյոք նրանք կապեր կամ փորձագետներ այս ոլորտում:

Վենչուրային կազմակերպության մասին

- ➔ Ի՞նչ տեսակի շրջանաձև լուծում են նրանք առաջարկում:
- ➔ Արդյոք լուծումը ենթադրու՞մ է նախագծման մեկ կամ մի քանի հիմնական սկզբունքներ իրենց աշխատանքում:
- ➔ Ինչպե՞ս են նրանք ուսումնասիրել անհրաժեշտությունը, պոտենցիալը և պահանջվող գործընկերությունը շրջանաձև տնտեսության համատեքստում:

Աճի փուլի աջակցության ծրագրեր.

Ձեռնարկատիրոջ մասին

- ➔ Արդյո՞ք վենչուրային կազմակերպությունն ունի իր թիմի կամ խորհրդատվական ֆոնդում անհրաժեշտ բոլոր գիտելիքներն ու շփումները (դա կարող է արժեքավոր լինել ձեր ծրագրի շրջանակներում գործընկերների աջակցության միջոցառումների համար):

Վենչուրային կազմակերպության մասին

- ➔ Ի՞նչ տեսակի շրջանաձև լուծում են նրանք առաջարկում:
- ➔ Արդյո՞ք լուծումը բնութագրվում է շրջանաձև բիզնես մոդելով:
- ➔ Արդյո՞ք լուծումը ենթադրում է մեկ կամ մի քանի հիմնական շրջանաձև նախագծման սկզբունքների կիրառութուն իրենց գործունեության մեջ:
- ➔ Արդյո՞ք նրանց արտադրանքը համապատասխանում է շուկային:
- ➔ Արդյո՞ք այս լուծումը համակարգային ազդեցություն ունի (եթե դա համակարգային չէ, միգուցե դա լավ է ծրագրի համար, բայց ուշադիր եղեք այն «լուծումների» հանդեպ, որոնք նոր խնդիրներ են ստեղծում:)

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

- Արդյո՞ք նրանք սկսել են շրջանաձև համակարգի տեսանկյունից, թե՞ ցանկանում են անցնել ավելի շրջանաձև մոդելի:
- Արդյո՞ք թիմը բավարար գիտելիքներ ունի այն ոլորտի մասին, որտեղ գործում է, ներառյալ արժեշղթայի տարբեր դերակատարները և ինչպե՞ս են նրանք պատկերացնում համագործակցությունը:
- Արդյո՞ք նրանք գիտեն իրենց որոշման մեջ կան իրավական կամ լոգիստիկ բնույթի խոչընդոտները:

Այս հարցերը կօգնեն ձեր ընտրող հանձնաժողովին ծրագրի մասնակիցներին ճիշտ ընտրելու հարցում: Վերջնական ընտրություն կատարելուց առաջ հանձնաժողովի հետ քննարկեք, թե որ չափանիշներն են առանցքային ձեր ծրագրի և շրջանաձև տնտեսության նպատակների համար: Լավ գաղափար է ձեր երկրից կամ տարածաշրջանից շրջանաձև տնտեսության փորձագետ հրավիրել ընտրող հանձնաժողով: Կարող է նաև ձեռնտու լինել, որ ձեր գործընկերներից կամ հովանավորներից մեկը ընդգրկվի ընտրող հանձնաժողովի կազմում:

> *«Հենվեք մասնակիցների գիտելիքների և կապերի վրա: Ավելի հաճախ այն, ինչ փնտրում եք ծրագրերի իրականացման առումով, գտնվում է ձեռնարկատերերի՝ հատկապես շրջանաձև բնիկների և նրանց ցանցերի ներսում»:*
>
> Աուկսիցիլիա, Իմփաքթ հաբ Հարարե

Խթանում և կապեր

Սա օգնում է ընտրել ընկերությունների մեկ կամ երկու օրինակ, որոնք ցույց են տալիս, թե ինչ եք փնտրում, հատկապես, եթե շրջանաձև տնտեսությունը նոր է ձեր ձեռնարկատիրական էկոհամակարգի համար: Դուք կարող եք խնդրել օգտագործել նրանց պատկերներից մեկը ձեր սոցիալական մեդիայի արշավում: Որպես այլընտրանք, դուք կարող եք գտնել դեսպան, որը կխթանի ձեր ծրագիրը համապատասխան համայնքում:

Շրջանաձև տնտեսության մասին կարճ հանդիպումները կարող են օգտակար լինել, եթե սա շատ նոր թեմա է տարածաշրջանում կամ ոլորտում: Հրավիրեք մարդկանց քննարկելու շրջանաձև տնտեսության հնարավորություն-ները և ավարտեք ծրագրին գրանցվելու կամ այլ պոտենցյալ մասնակիցների թեկնածություններ առաջադրելու հրավերով: Հատկապես ՓՄՁ-ների կամ ավելի առաջադեմ ստարտափների համար կարող է հետաքրքիր լինել առաջարկել, որ նրանք ներգրավեն մատակարարման շղթայի գործընկեր և միասին գրանցվեն ծրագրում՝ համատեղ աշխատելու շրջանաձև տնտեսության նորարարությունների վրա: Անկախ նրանից, թե դուք առաջինն եք, ով կենտրոնանում է շրջանաձև տնտեսության վրա ձեր տեղական համատեքստում, կամ հիմնվում է այլ նախաձեռնությունների վրա, կարևոր է հաշվի առնել ձեր հաղորդագրությունները հաղորդակցման նյութերում:
Ինչպես ավելի վաղ նշվեց, ձեռնարկություններին աջակցող հիմնադրամները կարող են կարևոր դեր ունենալ երկխոսության ամրապնդման գործում և խուսափել շրջանաձև տնտեսության տերմինաբանության աղավաղումից:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Ուշադիր մտածեք ձեր օգտագործած լեզվի մասին: Չնայած, դուք ցանկանում եք խուսափել տերմինաբանության աղավաղումից, դուք չեք ցանկանում օգտագործել այնպիսի ձևակերպումներ, որոնք վանում են ցանկալի լսարանին: Օգտագործեք բառապաշար, որը համահունչ է, ներառում է և ոգեշնչում ձեր համայնքը և էկոհամակարգը:
Ահա, մի քանի օրինակներ, թե ինչպես են Իմփաքթ հաբերը կազմակերպել իրենց միջոցառումները շրջանաձև տնտեսության ոլորտում:

- Շրջանաձև տնտեսության աքսելերացիոն ծրագիր, Impact Hub Կիգալի:
- Շրջանաձև միասին, Impact Hub Բեռլին:
- Տանգրամ, Impact Hub Բարսելոնա և Impact Hub Մադրիդ:

Ախտորոշում

Ձեր վենչուրների հատուկ բիզնես կարիքները հասկանալու համար հարկավոր է նրանց հետ ախտորոշում կատարել: Սա ձեր աջակցության ծրագրի կարևոր մասն է:

> Իմփաքթ հաբի Շրջանաձև ծրագրի պիլոտային ծրագրերն ինտեգրել են **շրջանաձևության ստուգում** իրենց առկա ախտորոշման մեջ: Եթե ձեր վենչուրները նոր են շրջանաձև տնտեսությունում, ապա կիրառեք այս գործիքն ավելի ուշ, այլ ոչ թե սկզբում, քանի որ գործիքը հասկանալու համար մարդիկ պետք է ունենան շրջանաձև տնտեսության մասին նախնական գիտելիքներ:

Գործընկերներ

Գործընկերները կարող են առաջարկել ֆինանսավորման, ոլորտային ցանցի և փորձագիտական գիտելիքների համադրություն: Վերցրեք, օրինակ, քաղաքականությունը մշակողներին, կորպորացիաներին կամ կազմակերպություններին, որոնք զբաղվում են ռազմավարական խորհրդատվությամբ: Պոտենցիալ գործընկերներին անկեղծորեն պատմեք ձեր հավակնությունների մասին և ժամանակ հատկացրեք նրանց նպատակները հասկանալու համար: Արդյոք դրանք համընկնում են: Հիշեք ձեր առաքելությունն ու արժեքները: Ձեր գործընկերային հարաբերությունները պետք է ամրապնդեն դրանք, այլ ոչ թե վտանգեն դրանք: Այս թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք էկոհամակարգի կառուցմանը նվիրված բաժնին:

Կապիտալի հասանելիության հեշտացում

Երբ նախնական պատկերացում ունենաք, թե ինչ ներդրումներ են փնտրում վենչուրները և որքանով են նրանք պատրաստ ներդրումներ կատարել, հաջորդ քայլը քարտեզագրելն է, թե ինչ է սպասվում նրանց և գտածը ներառել ձեր ֆինանսավորման հասանելիություն առաջարկի մեջ:
Թե ինչպես ստեղծել այս առաջարկը, հետևում է տվյալ գործիքակազմից, բայց սկսելու համար կարող եք ծանոթանալ շրջանաձև ֆինանսավորման բիզնես մոդելներին նվիրված բաժնին:
Հեթ Գրոեն Բրեինի շրջանաձև տնտեսության գիտելիքների այս քարտեզը տրամադրում են տասը քայլ բիզնես մոդելները ֆինանսավորելու համար, որոնք կարող եք ուսումնասիրել արժեքի ստեղծման մասին սեմինարի ընթացքում: Դուք կարող եք նաև օգտագործել նրանց դեպքերի ուսումնասիրությունները, թե ինչպես են ֆինանսավորվել շրջանաձև գործունեությունները:

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Աջակցության տրամադրում

Ահա սեմինարների ուղեցույցներ, որոնք պետք է ներառվեն ձեր ձեռնարկատերերի աջակցության ծրագրերում՝ շրջանաձև արտադրանքի և բիզնես մոդելների մշակման ժամանակ:

Սրանք ոչ թե սեմինարների մանրամասն պլաններ են, այլ ամփոփագրեր, ինչպես նաև Իմփաքթ հաբի ցանցում և դրանից դուրս առկա ռեսուրսների ցուցիչներ, որոնք կարող եք օգտագործել ոգեշնչման համար՝ սկսելու զարգացնել ձեր սեփական սեմինարները, որոնք կենտրոնացած են շրջանաձև տնտեսության վրա:

Սեմինարներ	Ռեսուրսներ
Մշակել շրջանաձև մտածողություն Ակտիվացրեք Ձեր խմբի շրջանաձև ճանապարհորդությունը՝ նպաստելով անձնական արտացոլմանը, իրավիճակի քարտեզագրմանը, միտումների բացահայտմանը և մտադրությունների հաստատմանը:	Օլեկուի ակտիվացնող շրջանաձև իրականությունները , Impact Hub Դոնոստիա-ից
Շրջանաձև դարձրեք ամենօրյա արտադրանքները Հրավիրեք մասնակիցներին վերցնել ամենօրյա արտադրանքը և վերամշակել այն շրջանաձև տնտեսության տեսանկյունից ՝ օգտագործելով համակարգային մտածողության մոտեցում:	Նախնական / վաղ փուլում գտնվող ձեռնարկությունների համար շրջանաձև նախագծման օրինակ կամ շրջանաձև ռազմավարության սեմինար ավելի ուշ մեկնարկի / աճի փուլում գտնվող վենչուրների համար՝ շրջանաձև նախագծման ուղեցույցից:
Շրջանաձև բիզնեսի մոդելներ Մշակել կամ վերասահմանել բիզնեսի մոդելները շրջանաձև նախագծման տեսանկյունից ՝ ընտրելով իրականացնել շրջանաձև ռազմավարություններ և սկզբունքներ:	Վարպետության դաս, ձևանմուշներ և ռեսուրսներ Յան Կոնեցկոյից:
Ծառայության հեղաշրջում Աճի աջակցության փուլում գտնվող ձեռնարկությունները ապրանքի վաճառքից անցնում են այդ ապրանքը ծառայության վերածելուն՝ դրանով իսկ զարգացնելով ավելի փակ բիզնես մոդել:	Սպասարկման շրջված կտավ ՝ շրջանաձև դիզայնի ուղեցույցից:
Շրջանաձևության ստուգում Անհատական և/կամ խմբային աջակցություն ձեռնարկությունների շրջանաջև վիճակի գնահատման և շրջանաձև ճանապարհային քարտեզի մշակման համար:	Շրջանաձևությունը ստուգելու աշխատանքային գրքույկ որը մշակվել է Accelerate2030 –ի կողմից, որպես Impact Hub-ի շրջանաձևության ծրագրի մաս:
Շրջանաձև համագործակցություն Միավորեք տարբեր ընկերությունների մարդկանց արժեքային շղթայում՝ ուսումնասիրելու, թե ինչպես նրանք կարող են օգտագործել միմյանց ուժեղ կողմերը՝ համապարփակ լուծում ստանալու համար:	Շրջանաձև համատեղ վենչուրների նախագծման սեմինար Շրջանաձև նախագծման ուղցույց-ից
Հարաբերությունների և էկոհամակարգի կառուցում Աջակցեք վենչուրներին՝ ստեղծելու իրենց սեփական էկոհամակարգը և հաջող համագործակցություն հաստատեք շրջանաձև արտադրանքը իրացնելու համար:	Գործիքներ համակարգային մտածողների համար Լեյլա Աչարօղլուից, և էկոհամակարգի քարտեզ Ծառայությունների նախագծման գործիքներ-ից

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Այս կայքերում բերված են են շատ այլ ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ ապահովել շրջանաձևության հետ կապված աջակցություն ձեր ծրագրերի համար:

- Oleku, Իմփաքթ հաբ Դոնոստիա
- The Circular Design Guide, Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամ և IDEO
- Circular Economy university courses, Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամ
- The Circular Toolbox, Շրջանաձև տնտեսություն

Շրջանաձև տնտեսությանն աջակցող կապեր

Քիչ հավանական է, որ դուք կարողանաք տրամադրել այն ամբողջ աջակցությունը, որն անհրաժեշտ է ներքին ձեռնարկատերերին: Փոխարենը զարգացրեք գործընկերություններ: Կառուցեք համապարփակ, ճկուն աջակցության ցանց ձեր ձեռնարկատերերի համար, որը ներառում է դասընթացավարներ, մենթորներ, փորձագետներ, հավասար խմբեր, համայնքի անդամներ և շրջանավարտների համայնքներ:

Լավ գաղափար է ունենալ ձեռնարկատիրական անցյալ ունեցող մենթորներ, ովքեր նախկինում բիզնեսներ են կառուցել և տիրապետում են շրջանաձև տնտեսության գիտելիքներին: Դուք նաև պետք է փնտրեք մենթորների, որոնք ունեն փորձ այն ոլորտում, որտեղ գործում են վենչուրները:

Մենթորները պետք է լինեն սպարկինգ գործընկերներ՝ ձեռնարկատերերի հետ շրջանաձև տնտեսության ռազմավարության և եկամուտների օրինաչափությունների քննարկման համար, ինչպես նաև դռներ բացեն գործընկերների և, հնարավոր է, ներդրողների համար:

«Կառուցեք ձեր մենթորների ավազանը: Այնուհետև ձեր ծրագրի անդամներին հատկացրեք որոշակի քանակությամբ ժամեր (կրեդիտներ), որոնք նրանք կարող են օգտագործել այնպես, ինչպես ցանկանում են այս մենթորների ավազանում»:
Ջոքսին, Իմփաքթ հաբ Դոնոստիա

Երբ շրջանաձև ստարտափները քննարկում են իրենց մտադրությունները գործընկերների հետ, ինչպիսիք են ՓՄՁ-ները, հետազոտողները և քաղաքականություն մշակողները, մենթորը կարող է բերել իրենց փորձը՝ նախապատրաստելու կամ հեշտացնելու այդ խոսակցությունները, քանի որ նրանք կարող են իմանալ շրջանաձև լուծում առաջարկելու լավագույն անկյունը:

Դուք կարող եք խուսափել «հին համակարգի» ներկայաչուցիչներից, եթե նրանք ներգրավված չեն շրջանաձև տնտեսության մեջ: Փոխարենը, փնտրեք տեսլականներ և արժեքներ ունեցող առաջադեմ անհատներ և կազմակերպություններ, որոնք արձագանքում են շրջանաձև տնտեսության սկզբունքներին:

Եթե դուք կառուցում եք շրջանավարտների ուժեղ համայնք, կարող եք նաև ստեղծել տնային մենթորների խումբ՝ ծրագրի ապագա անդամներին աջակցելու համար:

IMPACT HUB

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորիների համար

Հղումներ և երախտիքի խոսք

Ներածություն, միտումները և շրջանակները

Biomimicry Institute, website.

The Blue Economy, website.

Circular Strategies, website.

Circle Economy (2020), Climate change mitigation through the Circular Economy.

Circle Economy, The Disrupt Framework.

Circle Economy (2016), Master Circular Business with the Value Hill.

Cradle to Cradle Certified, What is Cradle to Cradle Certified?

Doughnut Economics Action Lab, About Doughnut Economics.

Ellen MacArthur Foundation, The butterfly diagram: visualising the Circular Economy.

Ellen MacArthur Foundation (2015), Growth Within: a Circular Economy Vision for a Competitive Europe.

Ellen MacArthur Foundation, Systems and the Circular Economy.

Ellen MacArthur Foundation, What is the Circular Economy?.

Natural Capital Solutions, website.

PBL Netherlands Environmental Agency (2019), Outline of the Circular Economy.

Sandberg, M. (2021), Sufficiency transitions: A review of consumption changes for environmental sustainability.

Stahel, W. (2010) The Performance Economy.

Stockholm Resilience Centre, The nine planetary boundaries.

World Economics Forum (2021), Circular Trailblazers: Scale-Ups Leading the Way Towards a More Circular Economy.

World Resources Institute (2019), Here's What Could Go Wrong with the Circular Economy - and How to Keep it on Track.

World Resources Institute (2021), 5 opportunities of a Circular Economy.

Wikipedia, Industrial ecology.

WWF (2021), Circularity as the new normal: Future fitting Swiss businesses.

Կայունության համարժեքության հայեցակարգը

Alexander, S., (2012), Living Better on Less? Toward an Economics of Sufficiency. Simplicity Institute Report.

Bocken, N. and S. Short, (2019), Transforming Business Models: Towards a Sufficiency-based Circular Economy.

Fischer, C. and G. Rainer (2013), Working Paper. When less is more - Sufficiency: Terminology, rationale and potential. Oeko-Institute's Working Paper.

Parrique T., J. Barth, F. Briens, C. Kerschner, A. Kraus-Polk., A. Kuokkanen and J.H. Spangenberg (2019), Decoupling debunked: Evidence and arguments against green growth as a sole strategy for sustainability.

Prince, T. (2005), The Logic of Sufficiency.

Schneidewind, U. and A. Zahrnt (2014), The Politics of Sufficiency. Make it easier to live the good life.

Sorrell, S. (2010), Energy, Economic Growth and Environmental Sustainability: Five Propositions.

Zink, T. and R. Geyer (2017), Circular Economy rebound.

Շրջանաձև տնտեսությունն Աֆրիկայում

Footprints Africa (2020), The Circular Economy: our journey in Africa so far.

World Economic Forum (2021), Five Big Bets for the Circular Economy in Africa African Circular Economy Alliance.

Ագրոպարենային արտադրանք

Ellen MacArthur Foundation, Food and the Circular Economy.

Het Groene Brein, How do we use biomass and food circularity?

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Շինարարություն և կառուցված միջավայր

Circle Economy (2019), Circle Scan Rockwool: opportunities to grow the Circular Economy in the Build Environment.

Ellen MacArthur Foundation (2020), 10 circular investment opportunities for a low-carbon and prosperous economy.

Նորաձևություն

Circle Economy, Step by step guide for apparel brands to design and launch a rental or resale pilot in 10 months.

Ellen MacArthur Foundation, Fashion and the Circular Economy.

Ellen MacArthur Foundation (2017), A new textiles economy: redesigning fashion's future.

Էլեկտրոնիկա

Het Groene Brein, How do we make manufacturing circular?

Թափոններ և պլաստիկ

Earth.org (2021), The effects of China's ban on imported scrap plastic on global recycling efforts.

Ellen MacArthur Foundation, Designing out plastic pollution.

Ellen MacArthur Foundation, Plastics and the Circular Economy.

Het Groene Brein, How do we make plastics circular?

Բիզնեսը և շրջանաձև տնտեսությունը

Bakker, C, M. den Hollander and E. van Hinte (2019), Products That Last: Product Design for Circular Business Models.

Circle Economy, Circular Jobs.

Circle Economy (2021), Closing the skills gap: vocational education and training for the Circular Economy.

CIRCO, website.

CircularX, Cases.

Het Groene Brein, How does financial risk change with a circular business model?

Het Groene Brein, Which circular business models arise?

Impact Hub Amsterdam, The legal challenges of Circular Economy.

Impact Hub Donostia, Oleku.

Organisation for Economic Co-operation and Development (2020), Labour market consequences of a transition to a Circular Economy.

SITRA (2021), The winning recipe for a Circular Economy.

Wirtz Film and Experience, De financiering van de Circulaire Economie.

Young Africa, website.

Էկոհամակարգի կառուցում

Circle Economy (2020), Will you be my partner?: Nine steps to identify and establish successful collaborations for a Circular Economy.

Impact Hub, Circularity Ecosystem Mapping.

Impact Hub Amsterdam and City of Amsterdam, Building a city ecosystem for Impact.

Metabolic (2020), Circular Boulder, pioneering steps towards a zero-waste and climate-neutral city.

Scott, S., M. Hughes and D. Ribeiro-Soriano (2022), Towards a network-based view of effective entrepreneurial ecosystems.

Startup Status (2020), The Australian innovation ecosystem focused on climate, renewable energy, and Circular Economy.

Ծրագրի ռեսուրսները

Acaroglu, L. (2017), Tools for systems thinkers.

Accelerate2030 and Impact Hub, Circularity Check.

Circle Economy, The Circular Toolbox.

Ellen MacArthur Foundation, The Circular Design Guide.

Ellen MacArthur Foundation, Circular Economy courses.

Ellen MacArthur Foundation, Circulytics.

Het Groene Brein, How do you make your business model financeable?

Het Groene Brein, What are examples of circular financing?

Impact Hub, Impact Management Framework.

Impact Hub, Tools for Impact Measurement.

Impact Hub Amsterdam (2022), 5 ways to embed circularity into your creative startups.

Impact Hub Donostia, Oleku.

Konietzko, J., Circularity Deck.

Metabolic (2020), Systemic venture building.

Service Design Tools, Ecosystem Map.

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Երախտիքի խոսքեր

Շատ շնորհակալություն այս գործիքակազմի համատեղ ստեղծման գործում ներգրավված անհատներին և կազմակերպություններին, հատկապես:

- Ամստերդամի Իմփաքթ հաբից Մանոն Քլեյնին բովանդակության ստեղծման համար:
- Աքսելերատոր 2030-ին մեզ հետ Circularity Program ծրագրի իրականացման և շրջանաձևության ստուգման համար:
- Աթենքում, Բարսելոնայում, Դակարում, Դար Էս Սալամում, Դոնոստիայում, Հարարայում և Կիգալիում գտնվող Իմփաքթ հաբերին որպես Circularity ծրագրի փորձարարներ վստահության, համագործակցության և խիզախության համար:
- DOEN հիմնադրամին և MAVA հիմնադրամին՝ այս աշխատանքին աջակցելու համար:

Ներդնելով շրջանաձևություն: գործիքակազմ ինկուբատորներիև աքսելերատորների համար © 2022 լիցենզավորված է իմփաքթ հաբի կողմից Attribution 4.0 International ներքո:

Impact Hub GmbH
Lindengasse 56 / 18-19, 1070
Vienna, Austria
UID : ATU66357747 | FN : 358967v

Ներդնելով շրջանաձևություն

Գործիքակազմ ինկուբատորների և աքսելերատորների համար

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Environment and Health

IMPACT HUB

IMPACT HUB Yerevan

Այս գործիքակազմը թարգմանվել է հայերեն Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության և թարգմանության համար պատասխանատվություն են կրում Իմփաքթ հաբ ցանցն ու «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ն և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետը:

This toolkit was translated into Armenian with the support of the European Union. The content and translation of the toolkit are the sole responsibility of the Impact Hub Network and the Environment and Health NGO and can in no way be taken to reflect the views of the European Union.